

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

L. ՏԱՐԻ ԹԻՒ 12 (1462) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 10, 2010  
VOLUME 30, NO. 12 (1462) SATURDAY, APRIL 10, 2010



Պաշտօնաթերթ՝  
Ս. Գ. Հնչակեան Կուսակցության  
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly  
1060 N. Allen Ave. Suite 101  
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆԻՐԵՆՊԵՐԿԻ ՀԱԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՏՕԳԹ.Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Տասնամյակներ ակնկալեցին, որ հայ ժողովուրդին դեմ Օսմանեան կայսրութեան գործած Ցեղասպանութիւնը դատող Նիւրնպերկ մը կը հրաւիրուի օրին մէկը: Այդ կապակցութեամբ ակնարկութիւն մը կատարեց Նախագահ Սերժ Սարգսեան, վերջերս իր ունեցած հարցազրոյցներէն մէկուն մէջ, հարց տալով, թէ ե՞րբ հայոց դեմ գործադրուած Ցեղասպանութեան Նիւրնպերկը տեղի պիտի ունենայ...: Նախագահի մը բերնով արտասանուած նման հարցադրումը չի սահմանէր, արդե՞ս, հետակայ Նիւրնպերկեան կարելիութեան մը հաւանականութիւնը:

Հաւատացած էին, թէ որքան ալ ուրացուած մնար հայ ժողովուրդի դէմ նեոֆասիստարար միւսուած, իրագործուած ու իր եղբունակն լրումիմ հասցուած ժողովրդակուլ Մեծ Եղեռնը՝ անշուշտ կարելի պիտի չդառնար՝ նման մի, հալածամի քի Ֆիդիֆայկան բնաջնջումի սպանակիքի տակ թագնուած պահել անվերջ: Բնութեան կողմէ սահմանուած օրէնքեր, ամէն գաղտնիք, անբարոյութիւն, ոմիր՝ ուշ կամ կանուխ, ինքզինք պիտի մատուցէ, ուրացման նարնատու մով: Իրողութիւնը երեսն պիտի գար: Չմարտութիւնը պիտի ժայթկէր: Արդարութիւնը իր տեղը պիտի գտնէր:

Ուրացումը՝ նախատինքն, անբարոյութիւնն եւ անիրաւութիւնն էր ոչ միայն արիւննուշտ օսմանցի կայսերական դահնապետներուն, անոնց յաջորդող արդի հանրապետական իշխանութիւններուն, մոլորեալ եւ նման իրադարձումներէ անտեղեկ հպատակներուն, նաեւ, բանէ բամբակէ անտեղեկ բուրք արդի նոր սերունդներուն, համար:

Նաեւ՝ նախատինքն ու լուռ դատապարտում էր մեր երկրագունդի հզօրներուն համար, որոնք իրենց պետական շահերէն մեկնած, մեղսակցութեան մէկ տարրերակը հանդիսացող լուսնաբարձ կը դիմագրաւէին ժողովուրդներու պատմութեան մէջ իր նմանը չունեցող հայոց դեմ իրագործուած Ցեղասպանութիւնը, անգիտանալ ճեւղակներով, որ այդ անտարբերութեամբ բաջալեր կը հանդիսանային նոր ջարդերու, հոլոքստներու, ինչպէս որ յետագային կատարուեցան աշխարհի չորս ծագերուն, սկսելով Պերլի-Նէն, հասնելու համար Ուկրաինա, Աուտան, Սերպիա եւ այլուր: Միլի-

### ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ԱԶԱՏ ԱՐՉԱԿԵԼ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

*Մարդու իրաւունքներու Միջազգային կազմակերպութեան (FIDH) նախագահ Սուէր Պելասէն Երեքշաբթի, Ապրիլ 6-ին Երեւանի մէջ տեղի ունեցող իրաւապաշտպաններու համագումարի բացման արարողութեան ընթացքին Հայաստանի իշխանութիւններուն կողմէ անյարգելի ազատ արձակել քաղաքական բանտարկեալները:*

*Սուէր Պելասէն այս կողմ հնչեցուց համաժողովի անունով, ինչպէս նաեւ իր մտահոգութիւնը յայտնեց Հայաստանի մէջ ընտրական գործընթացներու եւ մամուլի ազատութեան խոչընդոտներու վերաբերեալ:*

*Միջազգային կազմակերպութեան նախագահուէին նաեւ պահանջեց 2008 թուականի Մարտի 1-ի իրադարձութիւններու եւ իրաւապահ մարմիններու կողմէ ուժի անհամաչափ կիրառման վերաբերեալ արդիւնաւէտ քննութիւն կատարել: FIDH-ի ղեկավարը ըսաւ, որ իրենց մտահոգութիւնները յատնած են Հայաստանի իշխանութիւններուն:*

### ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՈՒԱՇԻՆԿԹԵՆԻ ՄԷՉ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՊԻ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻ ՀԵՏ

*Մերժ Սարգսեան Ուաշինկթըն կատարելիք այցի ժամանակ հանդիպում պիտի ունենայ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի հետ: Այս մասին Չորեքշաբթի, Ապրիլ 7-ին լրագրողներուն յայտնեց Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան: «Հայաստանի եւ Միացեալ Նահանգների միջեւ հաստատուել է բարձր մակարդակի կանոնաւոր քաղաքական երկխօսութիւն, շիտմաներ երկու երկրների ղեկավարութիւնների միջեւ, եւ մենք վստահ ենք, որ գալիք հանդիպումը երկու երկրների նախագահների միջեւ նոր օրակ, նոր թափ կը հաղորդի յարաբերութիւններին», - ըսաւ նախարարը:*

*Ինչ կը վերաբերի Միացեալ Նահանգներու մայրաքաղաքին մէջ Ապրիլի 12-13-ը կայանալիք միջուկային անվտանգութեան հարցերով գագաթնաժողովի ընթացքին Թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Էրտողանի հետ Հայաստանի նախագահի հաւանական հանդիպման, ապա այս պահուն, Էդուարդ Նալբանդեանի խօսքերով, «այդպիսի պայմանաւորուածութիւն ձեռք բերուած չէ»:*

*«Ես կարող եմ տեղեկացնել, որ այս պահին թուրքական կողմի նախաձեռնութեամբ Հայաստանում է գտնուում Էրտողանի յատուկ բանագնացը՝ Պարոն Սինիրլիօղլու»:*



Բանտարկեալի զգեստներով 12 երիտասարդներ բողոքի ցոյց կը կազմակերպեն Համագումարի վայրի առջեւ:

*«Յոյսով ենք, որ յստակ արձագանք կը ստանանք մեր մտահոգութիւններու վերաբերեալ: Մենք պիտի շարունակենք մեր հարցադրումները մինչեւ պատասխան ստանալը», - յայտարարեց Սուէր Պելասէնը:*

Շաբ.ը էջ 4

### ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՇՈՒՏՈՎ ՍԿՈՒՏԵՂԻ ՎՐԱՅ ԱՏՐԲՊԵՅՅՄԱՆԻՆ Ե ՅԱՆՁՆԵԼՈՒ ՀԻՆԳ ՇՐՋԱՆՆԵՐԸ»

*Ապրիլ 6-ին տեղի ունեցած ընդդիմութեան հանրահաւաքի ընթացքին Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան յայտարարեց, որ Մերժ Սարգսեան կամայ թէ ակամայ, սկուտեղի վրայ Ատրպէյճանին պիտի յանձնէ Միասկի խուճիկի համախառն կողմէ վերջնազրի ձեւով պահանջուած հինգ շրջաններ:*

*Առաջին նախագահը նախ անդրադարձաւ իշխանական ճամբարէն ներս նկատուող խուճակին: «Աւազակապետութիւնն ունի խուճակաւոր լինելու երկու ակնյայտ պատճառ. առաջին՝ տնտեսական վիճակի բարելավման լիակատար անկարողութիւնն ու սոցիալական*

Շաբ.ը էջ 16

### ՄՈՆԹԵՎԻՏԵՈՅԻ «ԱՐՄԵՆԻԱ» ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ ԿԸ ՏԵՂԱԴՐՈՒԻ ԽԱԶՔԱՐ



*Ուրուկուալի մայրաքաղաք Մոնթեվիտէոյի քաղաքապետարանը մէկ տարի շարունակուող բանակցութիւններէն ետք, ի վերջոյ*

*արտօնած է «Արմենիա» հրապարակի վրայ տեղադրել Հայաստան*

Շաբ.ը էջ 4

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ՏԵՐ ՇՊԻԿԸԼ» ԹԵՐԹԻ ԶԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԶԵՏ

Տեր Շփիկըլը. «Վարչապետ Ռեզիֆ Թայիփ Էրտողանը «Շփիկըլի» հետ զրոյցում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած ցեղասպանութեան մասին ասաց, որ «հայերի դեմ Ցեղասպանութեան մասին խօսք լինել չի կարող»: Ինչու՞ Ձեր հարեւանը չի համակերպուում իր անցեալի հետ»:

Սերժ Սարգսեան. «Վերջերս մի յայտարարութիւն էլ արուեց, որ թուրքերը չէին կարող Ցեղասպանութիւն իրագործել եւ թէ թուրքական պատմութիւնն «արեւի պէս ջինջ ու պայծառ» է: Թուրքերը դէմ են հանդէս գալիս, որ կատարուածը Ցեղասպանութիւն որակուի: Սակայն, դա այն հարցը չէ, որ Անքարան պէտք է որոշի»:

Տեր Շփիկըլը. «Յիմա Էրտողանը նոյնիսկ սպառնում է Թուրքիայում ապօրինի ապրող հազարաւոր հայերի վտարմամբ»:

Սերժ Սարգսեան. «Նման անընդունելի արտայայտութիւններն իմ ազգի մէջ Ցեղասպանութեան յիշողութիւններ են արթնացնում: Ցաւօք, թուրք քաղաքական գործիչների շուրթերից նման յայտարարութիւններն ինձ համար անակնկալ չեն»:

Տեր Շփիկըլը. «Ի՞նչ դիրքորոշում պիտի ցուցաբերի միջազգային հանրութիւնը»:

Սերժ Սարգսեան. «Միջազգային հանրութիւնը պէտք է վճռականօրէն արձագանքի: Ամերիկան, Եւրոպան, նաեւ Գերմանիան, բոլոր պետութիւնները, որոնք ընդգրկուած են հայ-թուրքական մերձեցման այս գործընթացում, պէտք է հրապարակայնօրէն իրենց դիրքորոշումն արտայայտեն: Եթէ բոլոր պետութիւնները Ցեղասպանութիւնն արդէն ճանաչած լինէին, թուրքերն այդպէս չէին արտայայտուի: Յուսադրող է, որ թուրքիայում բազմաթիւ երիտասարդներ բողոքեցին այդ յայտարարութեան դէմ: Այնտեղ նոր սերունդ է մեծանում, որի կարծիքը քաղաքական ղեկավարութիւնը պէտք է հաշուի առնի»:

Տեր Շփիկըլը. «Թուրքիան Ձեզ մեղադրում է պատմաբանների համատեղ յանձնաժողով ստեղծելու գաղափարին կարծի դիրքորոշում ցուցաբերելու համար: Ինչու՞ էք դեմ դրան»:

Սերժ Սարգսեան. «Ինչպէ՞ս կարող է նման յանձնաժողովն անաչառ աշխատել, եթէ ցեղասպանութիւն կորոշվի գործիքը գործածելու համար Թուրքիայում մարդկանց հետապնդում եւ դատապարտում են: Անկարայի համար կարեւորը որոշումները ձգձգելն է. որպէսզի երբ այլ պետութիւնների խորհրդարանները կամ կառավարութիւնները փորձեն Ցեղասպանութեան մասին բանաձեւեր ընդունել, ասեն՝ մի խանգարէք, տեսէք մեր պատմաբաններն այս հարցերը լուծում են: Նման յանձնաժողով ստեղծելը կը նշանակէր կասկածի տակ դնել մեր ժողովրդի դէմ իրագործուած Ցեղասպանութեան փաստը: Դա մեզ համար անընդունելի է: Յանձնաժողովի ստեղծումն այն դէպքում իմաստ կ'ունենար, եթէ թուրքիան իր մեղքը խոստովանէր: Այդ ժամանակ գիտնականները համատեղ կարող էին պատճառները հետազօտել, որոնք յանգեցրին այդ ողբերգութեանը»:

Տեր Շփիկըլը. «Ցեղասպանութիւն

նից անցել է արդէն 95 տարի, ինչու՞ է դրա ճանաչումը Յայաստանի համար դեռ այսքան կարեւոր»:

Սերժ Սարգսեան. «Սա պատմական արդարութեան եւ մեր ազգային անվտանգութեան հարց է: Նման սարսափելի իրադարձութեան կրկնութիւնը կանխելու լաւագոյն ճանապարհն այն յստակ դատապարտելն է»:

Տեր Շփիկըլը. «Ձեր նստավայրի պատուհանից երեւում է Յայաստանի խորհրդանշան Արարատ լեռը: Այսօր նա սահմանի այն կողմում է՝ անհասանելի: Թուրքիան վախճում է տարածքային եւ փոխհատուցման պահանջներից: Դուք Արարատը յե՞տ էք ուզում»:

Սերժ Սարգսեան. «Այն մեզնից ոչ ոք չի կարող խել. Արարատը մեր սրտերում է: Աշխարհի ցանկացած վայրում ապրող հայի տանը դուք անպայման կը գտնէք Արարատ լեռան նկարը: Ես համոզուած եմ, որ կը գալ ժամանակ, երբ Արարատը կը լինի մեր երկու ազգերի ոչ թէ բաժանման, այլ փոխըմբռնման խորհրդանշան: Յստակեցնեմ սակայն հետեւեալը. երբեք Հայաստանի որեւէ պաշտօնատար անձ տարածքային պահանջներ չի ներկայացրել Թուրքիային: Թուրքերն իրենք են դա մեզ վերագրում, գուցէ մեղքի գիտակցումից»:

Տեր Շփիկըլը. «Թուրքիայի եւ Ատրպեյճանի հետ ձեր սահմանները փակ են, Իրանն ու Վրաստանն էլ դժուար հարեւաններ են: Աւելի ճիշդ չէ՞ր լինի Թուրքիայի հետ ցեղասպանութեան շուրջ անվերջ վիճելու փոխարէն ճեղքել այդ մեկուսացումը»:

Սերժ Սարգսեան. «Մենք ցեղասպանութեան ճանաչումը չենք կապում սահմանների բացման հետ: Եւ մեր մեղքը չէ, որ մերձեցումը չի կայանում»:

Տեր Շփիկըլը. «Թուրքիան ցանկանում է սահմանի բացումը կապել Լեռնային Ղարաբաղի հարցում առաջխաղացման հետ: Յայերը դիմակայեցին այս տարածքում սահմանադրուած պատերազմում, որին խորհրդային Միութեան փլուզումից յետոյ յաւակնում էր Ատրպեյճանը»:

Սերժ Սարգսեան. «Թուրքերը մշտապէս մեր կողմից գիջումներ են ուզում: Դա, սակայն, անհնար է: Կարեւորագոյն հարցը Լեռնային Ղարաբաղի բնակչութեան ինքնորոշման իրաւունքի իրացումն է: Եթէ Ատրպեյճանը ճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը, կարծում եմ, հաշուած ժամերի ընթացքում կարելի է խնդիրը լուծել: Ցաւօք նրանք դեռեւս համարում են, որ պէտք է վերադարձնեն Ղարաբաղը: Իսկ վերադարձնել Ղարաբաղը Ատրպեյճանի կազմ նշանակում է կարճ ժամանակահատուածի ընթացքում ամբողջովին հայթափել Լեռնային Ղարաբաղը»:

Տեր Շփիկըլը. «Ի՞նչ լուծում էք Դուք առաջարկում»:

Սերժ Սարգսեան. «Ինչու՞ նախկին Հարաւսլավիայի երկրները կարողացան անկախութիւն ստանալ: Ուրեմն, ինչու՞ Ղարաբաղը չպէտք է ունենայ նոյն իրաւունքները, մի՞թէ միայն այն պատճառով, որ Ատրպեյճանը նախ թ ու գազ ունի եւ Թուրքիայի պէս հովանաւոր: Մենք դա արդարացի չենք համարում»:

ԻՆՉՊԵ՞Ս ԷՐ ՄՍԽԻՈՒՄ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ՅԱԿՈՒԲԱԴԱՆԵԱՆ

Օրեր առաջ, ԼՂՀ պաշտպանութեան բանակի նախկին հրամանատար Սամուէլ Բաբայեանը յայտարարում էր, որ 16 տարի շարունակ «մսխուել է մի փայլուն յաղթանակ»: Ընդ որում, «մսխելու» համար նա մեղադրում էր բոլորին, իսկ երբ լրագրողները խնդրում էին տալ կոնկրետ պատասխանատուների անուններ, Սամուէլ Բաբայեանը յայտարարում էր, թէ ում անունն ուզում են թող գրեն ու վերագրեն իրեն: Բայց անձամբ ինքը, չգիտես ինչու, որոշեց միայն երկու անուն տալ՝ Անդրանիկ Քո-

մեքենաներով, որոնք ոչ միայն մեծահարուստներին են վաճել, այլ նաեւ նրանց գրպանին են միայն հասել: Ցեռոյ զգալով, որ շատ դժուար է բացատրել այդ ամէնի ծագումը, նրանք սկսեցին արդարանալ, թէ իբր պաշտօնի չեղած ժամանակ բիզնեսով են զբաղուել, կամ շատ շուտով ընկերներ ունեն, կամ պաշտօն ունեն, բայց նաեւ սեփականատէր են:

Այդպիսով, տեսնում ենք, արդէն մօտ երկու տասնամեակ, որ հայկական երկու պետականութիւններում իրավիճակը շատ ու շատ կոնկրետ է, գրեթէ մանրակրկիտութեան աստիճան կոնկրետ: Այդ

Հայկական պետութիւններն ունեցել են իրենց կազմաւորման իրաւական հիմքը, այդ հիմքը «շաղախուել» է նաեւ պատերազմով եւ այն փայլուն յաղթանակով, որի մասին խօսում է Սամուէլ Բաբայեանն ու որի մսխումն, ի դէպ, արձանագրում է միանգամայն արդարացի

չարեան եւ Աշոտ Մանուչարեան: Թէ ինչ խնդիրներ ունի կոնկրետ նրանց հետ Սամուէլ Բաբայեանը, դա իհարկէ հանրութեանը հազիւ թէ շատ հետաքրքրի: Երեւի թէ օգտակար էլ չէ քննարկել նրանց միջեւ եղած խնդիրները: Աւելի օգտակար է, երեւի թէ, քննարկել այն երեւոյթը, որ կոչուած է «մեղաւոր ենք բոլորս»:

Արդէն մօտ երկու տասնամեակ է, որ կայ երկու հայկական պետութիւն՝ Հայաստանի Հանրապետութիւն եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն: Այդ երկու հայկական պետութիւններն ունեցել են իրենց կազմաւորման իրաւական հիմքը, այդ հիմքը «շաղախուել» է նաեւ պատերազմով եւ այն փայլուն յաղթանակով, որի մասին խօսում է Սամուէլ Բաբայեանն ու որի մսխումն, ի դէպ, արձանագրում է միանգամայն արդարացի: Այդ պատերազմը վարած եւ յաղթանակ ապահոված հրամանատարներից եւ կազմակերպական աշխատանքի «հարուածայիններից» շատերը ստանձնեցին նաեւ հայկական երկու պետութիւնների քաղաքական ղեկավարութիւնների դերը, զբաղեցրին բարձրաստիճան տարբեր պաշտօններ, անցան քաղաքացիական կեանքի կազմակերպման գործին: Այդ թուում եւ Սամուէլ Բաբայեանը:

Հայաստանի Հանրապետութիւնն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ունեցան առնուազն 3-ական նախագահ, մի քանի վարչապետներ, պաշտպանութեան եւ այլ ոլորտների մի քանի նախարարներ, մի քանի գումարման խորհրդարաններ: Այդ նախագահները, վարչապետները, նախարարներն ու պատգամաւորներն ունէին եւ ունեն կոնկրետ լիազօրութիւններ, կոնկրետ պարտականութիւններ, որ սահմանուած են Սահմանադրութեամբ եւ օրէնքներով: Նրանցից ամէն մէկը անհատական պատասխանատուութիւն է կրում իր ոլորտի համար՝ մէկի դէպքում ոլորտը մեծ է, միւսի դէպքում փոքր, իսկ մէկի դէպքում էլ գուցէ ամբողջ երկիրն է մի ոլորտ: Միեւնոյն ժամանակ, նոյն այդ պաշտօնեաները, կամ դրանց ճնշող մեծամասնութիւնը՝ նախկին, թէ ներկայ, Հայաստանի, թէ Ղարաբաղի, սկսեցին ապրել բաւական շքեղ կեանքով, ունենալ բաւական շքեղ տներ, երթեւեկել բաւական շքեղ

դէպքում տրամաբանական հարց է առաջանում, թէ ինչու է այդպէս ստացւում, որ իրավիճակն այդքան կոնկրետ է, պետութիւնները ղեկավարելու, քաղաքացիական կեանքը կազմակերպելու, երկիրը զարգացնելու պատասխանատուութիւնների եւ լիազօրութիւնների բաշխումը, եւ դրան զուգահեռ երկրի՝ հայկական երկու պետականութիւնների նիւթական հարստութիւնների բաշխումն այդքան կոնկրետ է եւ յստակ, բայց ձախողման եւ յաղթանակը մսխելու հարցում «մեղաւորը բոլորս ենք»:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶՆՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՅԵՆ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail),
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104



ՎԱՅԱՍԱՆ

ՎԵՑ ԶԱԶԱՐ ԸՆՏԱՆԻՔ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿԸ ԲՈՂՈՔԱՐԿԻ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Ընդդիմադիր Հայ ազգային գոնկրեստի նախաձեռնությունները եւ աջակցությունները, շուրջ 6 հազար ընտանիքներ դատարան են դիմում Ապրիլի 1-ից գազի սակագները բարձրացնելու վերաբերեալ Հանրային ծառայությունները կարգաւորող յանձնաժողովի որոշումը անվաւեր ճանաչելու հայցով:

Յանձնաժողովի Փետրուարի 26-ի որոշմամբ բնակչությանը մատակարարող 1 խորանարդ մետր գազի սակագինը սահմանուել է 132 դրամ՝ նախկին 96-ի փոխարէն:

Հայցը դատարան կը ներկայացուի մինչեւ Ապրիլի 7-ը: Դատարան դիմող կողմը համոզուած է, որ յանձնաժողովի որոշումը հակասում է օրէնսդրութեանը: Մտայնացման հեղինակներին փաստաբան Վահէ Յովսէփեանը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում մատնանշեց, որ, մասնաւորապէս, խախտուած է Հանրային ծառայությունները կարգաւորող մարմնի մասին օրէնքի 5-րդ յօդուածը, որտեղ սահմանուած են կարգաւորման հիմնական սկզբունքները:

«Սպառողների եւ կարգաւորող անձանց շահերի հաւասարակշռման սկզբունքը ընդհանրապէս հաշուի չի առնուել», - մատնանշեց փաստաբանը, - «առաջնախնդիրները տրուել է «Հայօնուս-գազարդ» փակ բաժնետիրական ընկերութեան շահերին: Այսինքն, հաւասարակշռում պէտք է լինէր սպառողի եւ կարգաւորող անձի միջեւ: Տուեալ դէպքում կարգաւորող անձը, ըստ էութեան, իր նպատակին հասաւ, գները բարձրացուցին, սակայն սպառողները մնացին նոյն կտորած տաշտակի առաջ»:

Վահէ Յովսէփեանի փոխանցմամբ, օրէնսդրութեան հետ ալլ հակասություններ եւս կան, որոնց մասին նա առաջիկայ հարկ չի համարում խօսել:

Փաստաբանը բացատրում է իրենց յայտի մերժումը դատարանի կողմից. - «Իսկ հայցադիմումը վերադարձնելու հետ կապուած՝ մենք աշխատում ենք, որ բացառենք այն թերութիւնները, որոնք դատարանին հիմք կը տան հայցադիմումը վերադարձնելու համար: Դրանք գոյտ տեխնիկական խնդիրներ կարող են լինել, քանի որ հայցողորների թիւը մեծ է»:

«Ժառանգութիւն» կուսակցութեան երկխօսութեան կոչին հայաստանեան ո՛չ ընդդիմադիր, ո՛չ էլ իշխանական քաղաքական ուժերից ոչ մէկը դեռեւս չի արձագանքել: Այդ մասին «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց կուսակցութեան վարչութեան նախագահ, Ազգային ժողովի պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանը:

«ԺԱՐԱՆԳՈՒԹԵԱՆ» ԿՈՉԻՆ ԱՐՁԱԳԱՆՔ ԶԿԱՅ

«Այս պահի դրութեամբ չեմ ցանկանում որեւէ մեկնաբանութիւն տալ, կը սպասենք մինչեւ պատասխանի համար առաջարկուող ժամկէտի աւարտը», - նշեց Մարտիրոսեանը:

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը հայաստանեան ընդդիմադիր եւ իշխանական 5 քաղաքական ուժերի երկխօսութեան կոչ է անում՝ համոզմունք յայտնելով, որ Հայաստանը ներկայումս կանգնած է 93 թուականից ի վեր ամենավտանգաւոր մարտահրաւրէի առջեւ: «Ժառանգութիւն»-ը առաջարկում է ստեղծել քաղաքական ոչ ֆորմալ կենտրոն՝ «կլոր սեղանի» ձեւաչափով, ընդդիմութեան ու իշխանութեան հաւասար ներկայութեամբ, եւ համատեղ քննարկել այս ուժերին յուզող բոլոր հիմնական խնդիրներն ու գալ ընդհանուր յայտարարի:

«Ժառանգութիւն»-ը այդ հարցով պաշտօնական նամակով դիմել էր Հանրապետական, «Բարգաւաճ Հայաստան», ՀՅ Դաշնակցութիւն, «Օրինաց երկիր» կուսակցութիւններին եւ Հայ ազգային կոնգրէսին՝ ակնկալելով պաշտօնական արձագանք, որի համար առաջարկուող ժամկէտը սպառուած է Ապրիլի 9-ին:

«Ժառանգութիւն»-ը այդ հարցով պաշտօնական նամակով դիմել էր Հանրապետական, «Բարգաւաճ Հայաստան», ՀՅ Դաշնակցութիւն, «Օրինաց երկիր» կուսակցութիւններին եւ Հայ ազգային կոնգրէսին՝ ակնկալելով պաշտօնական արձագանք, որի համար առաջարկուող ժամկէտը սպառուած է Ապրիլի 9-ին:

ԳԼԽԱԴՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԽՕՍԵԼ Է ՄԱՐՏԵԱՆ ԴԷՊՔԵՐԻ ՔՐԳՈՐԾԵՐԻՑ

ՀՀ գլխաւոր դատախազ Ադուան Յովսէփեանը Ապրիլի 7-ին ընդունել է ԵԱՀԿ Ժողովրդական հաստատութիւնների եւ մարդու իրաւունքների գրասենեակի տնօրէն Եանէշ Լենարչիչի գլխաւորած պատուիրակութեանը: Հանդիպմանը մասնակցում էր նաեւ ԵԱՀԿ երեւանեան գրասենեակի ղեկավար, դեսպան Սերգէյ Կապլինսոնը:

ՀՀ գլխաւոր դատախազութեան մամուլի ծառայութեան հաղորդմամբ, հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են, մասնաւորապէս, «Դատավարութիւնների դիտարկում» ծրագրի շրջանակներում ԵԱՀԿ Ժողովրդական հաստատութիւնների եւ մարդու իրաւունքների գրասենեակի՝ վերջերս հրատարակած գեկոյցում բարձրացուած հարցադրումներին վերաբերող հարցեր: Լենարչիչը նկատել է, որ գեկոյցի հիմնական նպատակն է նպաստել դատախազական համակարգի բարեփոխումների առաւել արդիւնաւէտ իրականացմանը, ձեւաւորել այնպիսի

օրէնսդրական դաշտ եւ մթնոլորտ, որտեղ կողմերից իւրաքանչիւրը՝ ե՛ւ դատախազութիւնը, ե՛ւ փաստաբանները, ե՛ւ արդարադատութիւն իրականացնող դատարանը, կարողանան առաւել արդիւնաւէտ իրականացնել իրենց գործառնութիւններն ու պարտականութիւնները:

ՀՀ գլխաւոր դատախազը կարեւորել է գեկոյցում բարձրացուած հարցադրումների առաւել մասնագիտական քննարկումների անցկացումը, որոնց արդիւնքում հնարաւոր կը լինի նաեւ մշակել համապատասխան օրինագծեր:

Հիւրի խնդրանքով ՀՀ գլխաւոր դատախազը մանրամասներ է յայտնել նաեւ Մարտի 1-2-ին Երեւանում տեղի ունեցած զանգուածային անկարգութիւններին, դրանց ընթացքում արձանագրուած սպանությունների, հրկիզումների, քաղաքացիների եւ ոստիկանների նկատմամբ կիրառուած բռնութիւնների կապակցութեամբ յարուցուած քրէական գործով ձեռք բերուած արդիւնքների եւ դժուարութիւնների մասին:

«ՔՈՉԱՐԵԱՆԸ ԶՈՒՐԿ Է ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ»

«Հայրենիք եւ Պատիւ» կուսակցութեան նախագահ Գառնիկ Մարգարեան վստահ է, որ Ապրիլի 13-ին՝ Ուաշինկթոնում յտակութիւն կը մտցուի ոչ միայն հայթուրքական շարաքերութիւններում, այլեւ ԼՂ հիմնախնդրի գործընթացում: «Սերժ Սարգսեանը կամ ստիպուած է լինելու այնտեղ փաստաթուղթ ստորագրելու, կամ արժանանալու է միջազգային ճնշումներին»:

Ինչպէ՞ս են արտայայտուելու այդ ճնշումները. «Ա.1+»-ի հարցին՝ գնդապետ Մարգարեանը պատասխանեց. «Բոլորին յայտնի է, որ կայ 2008թ. Մարտի 1-ը: Նախկին նախագահ, ներկայիս նախագահ, նրանք մինչեւ արմուկներն արեան մէջ են: Նրանք են կատարել Մարտի 1-ը, նրանք են ղեկավարել, նրանք են կիրառել ուժ սեփական ժողովրդի նկատմամբ: Եւրոպան եւ աշխարհը աչքերը փակեց դրա վրայ, որովհետեւ իրենց պէտք էր ոչ-լեգիտիմ, խամաճիկ համակարգ՝ այսօր իրենց խնդիրները լուծելու համար»:

Գառնիկ Մարգարեանը գտնում է, որ թէ՛ ԱՄՆ-ն եւ թէ՛ ՌԴ-ն այսօր ամէն ինչ անում են օր առաջ ազատագրուած տարածքներ մտնելու համար, սակայն դա նրանց չի յաջողուելու: «ՀՀ-ն ունի Եւրաբլուր, եւ ժողովուրդը երբեք դա թոյլ չի տայ»:

Ինչ վերաբերում է Ռոբերդ Քոչարեանի վերադարձի մասին



«Հայրենիք եւ Պատիւ» կուսակցութեան նախագահ Գառնիկ Մարգարեան

լուրերին, գնդապետ Մարգարեանը հարկ համարեց Քոչարեանին լիչեցնել 1999թ Հոկտեմբերի 27-ը, 2001թ «Առազաստ» սրճարանում Պօղոս Պօղոսեանի սպանությունը, 2004թ. Ապրիլի 12-ի լոյս 13-ի գիշերը, 2008թ. Մարտի 1-ի 10 գոհերը, քաղաքացիական պատերազմի սկիզբը: «Այս ամենից յետոյ քաղաքականութիւն վերադառնալու մասին մտածելը՝ ապացոյց է, որ Քոչարեանը գուրկ է բարոյականութիւնից: Ժողովուրդը նրան չի ներել, եւ նա դեռ պէտք է պատասխան տայ կատարուածի համար: Ժողովուրդը կը ների՞ նրան, թէ՞ ոչ, ցոյց կը տայ ժամանակը: Իր պաշտօնավարման 10 տարիներին բացի կոռուպցիայից, կրիմինալ համակարգի ձեւաւորումից, սեփական հարստութիւնը ղիգելուց նա ոչինչ չի արել մեր ժողովրդի համար», - ասաց նա:

ՍԵՐՓ ՍԱՐԳՍԵԱՆԸ Կ՛ԱՌԱՋԱԴՐՈՒԻ 2013-Ի ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Սերժ Սարգսեանը միանշանակ իր թեկնածութիւնը կ'առաջադրի 2013 թուականի նախագահական ընտրութիւններում: Այս մասին յայտարարեց Սերժ Սարգսեանի ղեկավարած Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Գալուստ Սահակեանը:

Պատասխանելով լրագրողների հարցերին, Հանրապետական կուսակցութեան փոխնախագահը նշեց, որ հաւանական չի համարում Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերդ Քոչարեանի առաջադրումը առաջիկայ նախագահական ընտրութիւններում:

«Կանխավարկածային չէ, որ Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը միասին կը դնեն (թեկնածութիւն): Դա շարունակուող ծրագրեր են, եւ այս անգամ այդ շարունակութիւնն ապահովում է Սերժ Սարգսեանը», - ասաց Գալուստ Սահակեանը:

Ասուլիսին մասնակցող Հանրապետական կուսակցութեան խորհրդի անդամ Վազգէն Կարախանեանը, նոյն հարցին պատասխանելով, ասաց, թէ Հանրապետականը առաջնորդուած է կուսակցութեան որոշումներով. - «Այս պահին ուրիշ որոշում չկայ: Հաստատապէս մենք պաշտպանելու ենք Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը»:

2013 թուականին կայանալիք նախագահական ընտրութիւններին Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը պաշտպանելու մասին վերջերս յայտարարեց նաեւ իշխող կոալիցիայի մաս կազմող «Օրինաց երկիր» կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանը:

Կոալիցիայի մաս կազմող «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը առաջիկայ 2013 թուականի նախագահական ընտրութիւններին որեւէ թեկնածուի պաշտպանելու վերաբերեալ որոշում չի կայացրել: Կուսակցութեան առաջնորդ Գաբրիլ Ծառուկեանի մամուլի խօսնակ Խաչիկ Գալստեանը «Ազատութիւն» ռատիոկայանին փոխանցեց, որ ընտրութիւններին դեռ շատ ժամանակ կայ, եւ կուսակցութիւնը նման հարց իր օրակարգում չունի:

«ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՍՈՒՄ ԽՈՒՃԱՊ ԶԿԱՅ»

Հայաստանի հանրապետական կուսակցութեան մամուլի խօսնակ, ԱԺ պատգամաւոր էրուարդ Շարմազանովը համաձայն չէ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթում հնչեցրած գնահատականներին, մասնաւորապէս, այն մտքին, ըստ որի՝ իշխանութեան ներսում խուճապ է:

«Դա Լեւոն Տէր-Պետրոսեանի երեւակայութեան արդիւնքն է: Եթէ նրա կանխատեսումներին հաւասարակշռում տրուի, իշխանափոխութիւն էր եղել, Ղարաբաղն էլ ծախուել էր», - Tert.am-ի հետ զրոյցում ասաց Շարմազանովը:

տայինք, հիմա վաղուց իշխանափոխութիւն էր եղել, Ղարաբաղն էլ ծախուել էր», - Tert.am-ի հետ զրոյցում ասաց Շարմազանովը:

էրուարդ Շարմազանովը նաեւ նշեց, որ առաջին նախագահի յայտարարութիւնները՝ կապուած դարաբարեան հիմնախնդրի լուծման հետ, զարմանալիօրէն համընկնում են թուրքիայից հնչող յայտարարութիւնների հետ, ինչը մտորելու տեղիք է տալիս:



# ԼՈՒՐԵՐ

## «ԼՈՒՐԶ ԽԱՂ Է ՍԿԱԾ ԶԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԷԱ ՄԵՐՁԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԷՆ ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ՄԵԿՈՒՍԱՑՆԵԼՈՒ ՈՒՂՈՒԹԵԱՍԲ»

«ԹԵՐԹ»: Թրքական «Հիւր-րիչէթ» օրաթերթը, անդրադառնալով Ապրիլ 12-13-ը Ուաշինգթոնի մէջ կայանալիք Միջուկային անվտանգութեան գագաթնաժողովին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրտողանի մասնակցութեանը եւ այդ գագաթնաժողովի շրջանակին մէջ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հետ Էրտողանի հարցազրույցի մասին, կը գրէ, որ լուրջ շահամատային խաղ է սկսած Երեւան-Անքարա հաշտեցման գործընթացին Պաքոն վերջնականապէս մեկուսացնելու նպատակով:

«Օպամայի վարչակազմը կը ցանկայ ամէն գնով կեանքի կոչել հայ-թրքական Արձանագրութիւնները: Այդ պատճառով ուղիներ կը փնտռէ ատրպէյճանական գործօնի ազդեցութիւնը Թուրքիայի վրայ չէզոքացնելու նպատակով: Ուա-

շինկթոնի մէջ տեղի ունենալիք գագաթնաժողովին Օպամայի վարչակազմը հրաւիրած է մի քանի երկիրները նախագահները եւ վարչապետները: Թուրքիայէն բացի, այդ երկիրներու շարքին են նաեւ Վրաստանն ու Հայաստանը: Սակայն Ատրպէյճանը չկայ», - կը գրէ «Հիւրիչէթը»:

Պարբերականի հետ հարցազրույցի ընթացքին, Հայ-թրքական գործարար խորհրդի թուրք համանախագահ Քասն Սոյաքը նշած է, որ Պաքոնի հայ-թրքական Արձանագրութիւններու հետ կապուած դիմակայութիւնը վերացնելու ուղղութեամբ պիտի աշխատին ինչպէս Միացեալ Նահանգներու, այնպէս ալ Ռուսաստանի ներկայացուցիչները, քանի որ Արձանագրութիւնները կը բխին ԵՎ Մոսկուայի, ԵՎ Ուաշինգթոնի շահերէն:

## ՀԱՅ ԵՎ ԱՏՐՊԵՅՃԱՆՑԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՁ ԵՆ ԶԱՄԱՔՈՒԵԼ

«NEWS.AM»: Թուրքիայի լրագրողների ֆետերացիայի եւ Իզմիրի տնտեսագիտական համալսարանի հաղորդակցութեան ֆակուլտետի կողմից կազմակերպուած «Լրագրողները կովկասում կայունութեան եւ համագործակցութեան համար» համաժողովին մասնակցելու համար կովկասից Իզմիր են մեկնել 16 լրագրող:

Թուրքական Gazeteciler կազմի փոխանցմամբ Իզմիրում Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպէյճանի մասնակցութեամբ Ապրիլի 3-4-ը կայացած կլոր սեղանի շուրջ քննարկման թեման է եղել կովկասում կայունութեան եւ համագործակցութեան համար

լրատուամիջոցների դերակատարութիւնը: Համաժողովին մասնակցել է նաեւ Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանը:

Թուրքիայի լրագրողների ֆետերացիայի նախագահ Ալիլլա Սերթէլը բացման խօսքում նշել է, որ նման հանդիպում առաջին անգամ է իրականացւում, որի նպատակն է հայ եւ ատրպէյճանցի լրագրողների միջեւ բարեկամութեան արտացոլումը երկու երկրների հասարակութիւնների մէջ: Բանախօսը նոյն ցանկութիւնն է յայտնել վրացի եւ ռուս լրագրողներին, որ իրենք լրատուութեան միջոցով լուծեն Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ առկա խնդիրները:

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒԵԼ Է ՏԻՆՔԻ ՄԱՐԴԱՍՊԱՆԻ ՑՆՑՈՂ ԶԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

«Haynews»: Վերջերսնոր ֆորմատով հեռարձակուող թուրքական TRT Haber հեռուստատանքը «Մեծ հետապնդում» հաղորդման ժամանակ ցուցադրել է «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր, պոլսահայ հասարակական գործիչ Հրանդ Տինքի սպանութիւնը գործած Օգիւն Սամասթի հարցաքննութիւնը: Մարդասպանը մօտ 3,5 ժամ տեւած հարցաքննութեան ընթացքում բաւական ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդել:

Վերջինս նշել է, սպանութիւնից 6-7 ամիս առաջ որ Հրանդ Տինքի մասին իրեն պատմել է «Եասին քեռին»՝ նոյն Եասին Հայալը, որն էլ Տինքին ներկայացել է որպէս թուրք ազգի թշնամի: Սամասթը նաեւ աւելացրել է, որ սպանութեան գործիքը հանդիսացող ատրճանակը եւս Հայալն է գնել եւ տուել իրեն, իսկ ինքը դրանից օգտուել է սովորել սպանութիւնից մէկ օր առաջ: Իսկ Դինքին ճանաչել է նոյն Հայալի տուած նկարներով:

Պարզ է դարձել, որ կիսազրագէտ Սամասթն անգամ Հայոց ցեղասպանութեան մասին չի իմացել: Թուրք մարդասպանը նաեւ հպարտութեամբ նշել է, որ ժանտարմներն իրեն սիրել են, ինչպէս նաեւ մինչ սպանութիւնը նրա հետ ծանօթ են եղել, այցելել իրենց թաղամաս, այդ իսկ պատճառով էլ նրա հետ լուսանկարուել են (խօսքը Թուրքիայի դրօշն իր ձեռքում պահած Սամասթի նկարն է ժանտարմերիայում, ուր նրա կողքին հպարտ-հպարտ կանգնած են եղել նաեւ թուրք ժանդարմները):

Թուրք մարդասպանը նաեւ խոստովանել է, որ ծեծել է թուրք ազգայնականների կողմից սպանուած Տրապիզոնի յոյն քահանայ Սանտորոյին, ինչպէս նաեւ նշել, որ



Հրանդ Տինքի սպանութիւնը գործած Օգիւն Սամասթ քրեական դրօշով

2007 թուականին Թուրքիայի վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողանի ինքնաթիռի մէջ տեղադրուած ուռմբի մասին կեղծ տեղեկութիւնը տուել է Եասին Հայալը:

Իսկ վերջում նա խոստովանել է, որ սպանութեան վայրում մի քանի րոպէ սպասելով՝ մտափոխուել է, որոշել է սպանութիւն չգործել, սակայն Տինքին տեսնելուն պէս բնագրաբար կրակել է նրա վրայ: Մարդասպանը Տինքի վրայ արձակել է երեք փամփուշտ:

Յիշեցնենք, որ Հրանդ Տինքը սպանուեց 2007 թուականի Փետրուարի 19-ին՝ Ստամպուլի Շիշլի թաղամասում գտնուող «Ակօս» թերթի խմբագրատան առաջ: Տինքի գործով դատավարութիւնը մինչ այժմ Սամասթին մեղաւոր չի ճանաչել եւ չի դատապարտել:

Իսկ Տինքի սպանութեան գործով ձերբակալուած Եասին Հայալը, ով դրդել է Օգիւնին սպանութեան, յայտնի է նաեւ 2004 թուականին Տրապիզոնում գտնուող McDonald's ռեստորաններից մէկի պայթեցումով, որի ժամանակ տուժել էր 6 մարդ:

## ՉՈՐՍ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ՈՃԻՐԻ ԶՈՐ

Անցեալ Շաբաթ Ապրիլ 3ին, կէսօրէ ետք ժամը 4:30ին, անձանօթ գինեալ մը, անակնկալ յարձակում մը գործած է Նորթ Հոլիվուտի Ռիվըրսայտ պողոտայի վրայ գտնուող «Հաթ Սպաթ» ճաշարանը, սպաննելով չորս հայ երիտասարդներ եւ վիրաւորելով երկու ուրիշներ: Միջադէպէն առաջ ճաշարանին մէջ հոգեճաշ մատուցուած էր 30-40 հոգիներու համար:

Ստացուած տեղեկութեանց համաձայն՝ զոհերն են Սարգիս Գարաճեան (26 տարեկան), Հայկ Եկանեան (25), Յարութիւն Բաբուրեան (28) եւ Վարդան Թոֆայեան: Կ'ենթադրուի թէ ոճրագործը շուրջ 30 տարեկան սպիտակամորթ մըն է, հաւանաբար ծագումով հայ: Հետաքննութիւնը կը շարունակուի:

Լոս Անձեզլիսի ոստիկանութեան համաձայն եղածը կանխամտածուած ոճիր մըն է:

Դժբախտաբար այս երկրորդ ոճրագործութիւնն է որ տեղի կ'ունենայ վերջին քանի մը շաբաթներու ընթացքին, որոնց զոհերը հայեր են:

## ՄՈՆԹԵՎԻՏԵՈՅԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ ԽԱՉՔԱՐ

Շաբաթուազուած էջ 1-էն

նէն բերուած խաչքար մը:

Իշխանութիւնները նախապէս կը մերժէին՝ պատճառաբանելով որ հրապարակը արդէն ունի իր յուշարձանը, համալիրը ամբողջական է, եւ մէկ այլ կառույց կրնայ խաթարել հրապարակի ճարտարապետական տեսքը: Սակայն, Ուրուկուայի զբօսաշրջութեան փոխնախարար Լիլիան Քէշիշեան որոշիչ դեր ունեցած է եւ, համոզելով իր կուսակիցները, ձեռք ձգած է խաչքարը տեղադրելու արտօնութիւն:

Քաղաքապետարանի որոշման մէջ ըստուած է, որ խաչքարը «հայութեան մէկ խորհրդանիշն է»:

Խաչքարի բացումը տեղի տեղի պիտի ունենայ Ապրիլի 24-ին՝ Հայոց Յեղասպանութեան 95-րդ տարելիցին նուիրուած յուշահանդէսի ժամանակ:

Այս ծրագիրը իրագործած են Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Հայ Ազգային Կեդրոնը եւ «Արմենիա» Հրապարակի Ազգային Յանձնախումբը:

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԶԱՄԱԺՈՂՈՎ

Շաբաթուազուած էջ 1-էն

լասէն:

FIDH-ի նախագահը կարեւոր նկատեց նաեւ այն հանգամանքը, որ համագումարը տեղի կ'ունենայ Հայոց Յեղասպանութեան 95-րդ տարելիցին օրեր առաջ եւ մասնակցող իրաւապաշտպանները կ'այցեցնեն Յեղասպանութեան զոհերու յուշահամալիր:

Երբ խօսքը տրուեցաւ Հայաստանի Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեանին, խումբ մը հայաստանցի իրաւապաշտպաններ եւ նախկին կալանաւորներ պարզեցին քաղաքական բանտարկեալներու նկարներով պաստարներ եւ սուլոցներով դիմաւորեցին Յարութիւնեանի ելոյթը: Նման բողոքի ցոյց եղաւ նաեւ Հայաստանի արդարադատութեան նախարար Գէորգ Դանի-

էլեանի ելոյթի ժամանակ:

Երեւանի Օփերայի շէնքի մօտ, ուր տեղի կ'ունենար համագումարը, բողոքի ցոյց կազմակերպած էր Քաղաքական բանտարկեալներու եւ հալածեալներու պաշտպանութեան կոմիտէն: Բանտարկեալներու զգեստներով 12 երիտասարդներ, որոնք իրենց վրայ կը կրէին նաեւ բանտարկեալ ընդդիմադիրներու անունները, շղթայակապ կանգնած էին կողք կողքի:

Այլ ցուցարարներ պաստառներով եւ «Մարտի 1»-ի զոհերու նկարներով կեցած էին անոնց կողքին եւ պարբերաբար կը վանկարկէին՝ «ամօթ, ամօթ»:

Համագումարին մասնակցող շատ մը իրաւապաշտպաններ, Սուէր Պելասէնի գլխաւորութեամբ միացան դուրսի ցուցարարներուն ու վանկարկեցին «լիպըրթի»՝ ազատութիւն:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
 massis2@earthlink.net



# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՄԵՍՐՈՊ ՄՈՎՍԵՍԵԱՆԻ ՀԵՏ:

### ՔՈՉԱՐԵԱՆՆ ԻՍԿԱՊԵՍ ՉԱՐԻՔ ԷՐ, ՆԱ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ՓՈԽԵՑ, ԴԱՐՁՐԵՑ ԳԱԻԱՌԱԿԱՆ

8 տարի առաջ՝ Ապրիլի 2-ին, էկրանից անհետացավ «Ա1+»-ը: Բայց նա փորձեց այս տարիների ընթացքում իր հեռուստադիտողին ինֆորմացիոն հոսքով ապահովել այլ մեթոդներով՝ թերթով, էլեկտրոնային կայքով, բլոգով, youtube-ով, մոբայլ նորութիւններով: Իսկ ինչու՞ փակուեց «Ա1+»-ը: Այս եւ այլ հարցերի մասին է գրուցը «Ա1+»-ի նախագահ Մեսրոպ Մովսէսեանի հետ:

- Պարոն Մովսէսեան, ձեր կարծիքով ինչու՞ փակուեց «Ա1+»-ը:

- Փակուեց, որովհետեւ «խանգարում էր» Ռոբերտ Քոչարեանին: Լինելով այլմոլորակային եւ տեսնելով, որ հնարաւոր է Հայաստանում իշխանութիւնը գաւթել եւ պահել միայն այն դէպքում, երբ մամուլը ենթարկուած է քեզ, առաջնորդուելով «Դու աշխատում ես մամուլի հետ, մամուլը աշխատում է քեզ համար» կարգախօսով՝ Քոչարեանն առաջինը «անդրադարձաւ» «Ա1+»-ին, որը մեծ վտանգ էր ներկայացնում նրա համար: Հենց «Ա1+»-ի օրինակով նա ցույց տուեց, թէ ինչ կը լինի այն մարդկանց հետ, ովքեր չեն խոնարհուում իր առջեւ, անկախ կեցողւածք ունեն, խանգարող հանգամանք են հանդիսանում իր գաւթած իշխանութիւնը օրինականացնելու հարցում:

- Այսինքն, կարելի՞ է ասել, որ «Ա1+»-ի եթերազրկումը հիմք դրուեց լրագրողների նկատմամբ բռնութիւնների:

- Ոչ միայն բռնութիւններին: «Ա1+»-ի եթերազրկումից յետոյ ԶԼՄ-ների 80 տոկոսից ավելին խոնարհուեց ինքնահռչակ նախագահի առջեւ: Քոչարեանը դրանից հաճոյք էր ստանում: Ապա սկսուեց Քոչարեանի՝ սեփական անձի մեծարման ժամանակաշրջանը: Լինելով ոչինչ՝ նա հնարաւորութիւն ստացաւ դառնալ ամէն ինչ եւ սա դարձրեց իր համար նոր կարգախօս, որը խիստ տարբերում էր Հոկտեմբերեան յեղափոխութեան նմանատիպ կարգախօսից՝ «Ով ոչինչ էր, հիմա ամէն ինչ է»: Այնտեղ յեղափոխութիւնն էր բերել այդ կարգախօսին, այստեղ անձը ստիպողաբար կեանք մտցրեց իր կարգախօսը:

- Ուզում եք ասել, եթէ «Ա1+»-ը եթերում լինէր, Ռոբերտ Քոչարեանը չէ՞ր լինի այն, ինչ կայ:

- Ես համոզուած եմ, որ եթէ «Ա1+»-ը եթերում լինէր, միանշանակ չէր լինի 2003 թ. նրա վերընտրութիւնը, 2004 թ-ի Ապրիլի 12-ի դէպքերը: Ոչ թէ «Ա1+»-ը տանկերով կը պաշտպանէր, այլ իր կեցողւածքով եւ աշխատանքով կը ստիպէր Քոչարեանին եւ նրա վարչակազմին ենթարկուել միջազգային եւ տեղական օրէնքներին՝ անընդհատ մատնացուց անելով օրէնքների խախտման փաստերը:

Դա, ի վերջոյ, պէտք է բերէր նրա զգաստացմանը եւ ստիպէր հրաժարուել ստի քաղաքականութիւնից: Իսկ երբ չկար որեւէ խոչընդոտ, չկար որեւէ արգելք, կար բռնի ուժ եւ բաւականին մեծ ամբիջիւ, եսասիրութիւն, Քոչարեանին յաջողուեց վերընտրուել, ինչն էլ, ես համարում եմ, դարձաւ չարիք մեր երկրի համար:

Քոչարեանն իսկապէս չարիք էր, նա մեր երկիրը փոխեց, դարձրեց գաւառական՝ սարերի մէջ կորած, կտրեց աշխարհից ու ստի-

պեց, բառիս բուն իմաստով, տանկերով եւ զօրքով ստիպեց ենթարկուել իր գաւառական օրէնքներին, եւ այդ պայմաններում սկսեց կուտակել հարստութիւն: Իսկ այդ հարստութիւնը, պարզում է, բաւականին մեծ է: Ու հիմա էլ, ինչպէս երեւում է, դա նրան չի բաւարարում եւ նա փորձում է վերադառնալ:

- Դուք իրատեսակա՞ն էք համարում նրա վերադարձի մասին խօսակցութիւնները:

- Ես բացառում եմ, դա անհնար է, որովհետեւ Քոչարեանի անձը այժմ ծանօթ է բոլորին՝ սկսած մեր ժողովրդից՝ վերջացած միջազգային կառույցներով: Եթէ այդպիսի բան էլ տեղի ունենա, միայն տանկերի միջոցով կը լինի, ինչը եւս բացառում եմ, որովհետեւ երբ Մարտի 1-ին Քոչարեանը ստորագրեց կրակելու հրամանը, իրականում նա գրեց իր մահախօսականը: Ինքն էլ դա ինձնից լաւ է հասկանում, բայց իրեն դնում է չհասկացողի տեղ:

- Այսինքն, «Ա1+»-ը դարձաւ Քոչարեանի անձնական թշնամի, եւ հակառակը՝ Քոչարեանը «Ա1+»-ի թշնամի՞ն:

- Գիտէք, «Ա1+»-ը թշնամի չունի, ունի միայն բարեկամներ. նոյն Քոչարեանն էլ «Ա1+»-ի մեծ բարեկամն է: Թող զարմանալի չթուայ, որովհետեւ Քոչարեանը բարձրացրեց «Ա1+»-ի հեղինակութիւնը: Այն տեղական մի հեռուստաընկերութիւն էր, որն ունէր մեծ պոտենցիալ եւ ազնիւ ձգտումներ: «Ա1+»-ը դժուար տարիներին ճանապարհ էր հարթում երիտասարդ հեռուստաընկերութիւնների համար՝ մոռանալով սեփական շահը, ցույց տալով հեռուստաընկերութեան իրական իմաստը մեր երկրում: Ու այդ մտածողութիւնը դանդաղեցնում էր ընկերութեան բարգաւաճումը:

Քոչարեանն իրենից անկախ «Ա1+»-ի վարկանիշը բարձրացրեց, ընկերութեանը բերեց միջազգային ճանաչում, յետոյ զղջաց, որ նման բան է արել: Դա էլ էր գալիս նրա անգիտութիւնից: Կոպիտ, բռն ուժը միշտ չի արդիւնաւէտ գործում:

Այսօր երբ դուրս եմ գալիս փողոց, ինձ թւում է՝ «Կապիկների մոլորակ» ֆիլմը մեզ մօտ է նկարահանուել: Թւում է՝ նոյն այդ կապիկները, շիմպանզեները, կորիլաները, դեգրադացուած մասսան է իշխում, որն իր առաքելութիւնը տեսնում է ուրիշ ունեցողւածք իւլելու, սեփական գրպանը հարստացնելու մէջ. ուրիշ ինչի կարծես նրանք չունեն: Իսկ Քոչարեանն այլմոլորակային էր այստեղ եւ այդպէս էլ մնաց մինչ օրս: Հայաստանը չընդունեց այդ այլմոլորակայինին, որքան էլ նա փորձեց սկաֆանդը քաշել դէմքին, որ չերեւայ՝ ով է, բայց բոլորն էլ հասկացան, թէ ինչ է իրենից ներկայացնում:

- Բայց 10 տարի նա ապրեց Հայաստանում, աշխատեց, ղեկավարեց:

- Ես դա չէի անուանի ապրել. նա 10 տարի պաշտպանուել է: Երբ մարդ 10 տարի անընդհատ պաշտպանուած է, նշանակում է, որ նա այս երկրում տեղ չունի, իսկ ուժով պաշտպանուելը թուլութեան նշան է: Ես չտեսայ մի քայլ, որն արուէ ժողովրդի համար: Բոլոր իր քայ-



լերը առաջին օրուանից մինչեւ վերջին օրը՝ Մարտի 1-ը, եղել են ժողովրդի դէմ, եւ այն սպանդը, որ տեսանք, այն ապոգեոսն էր, որ հասունացել էր Քոչարեանի մէջ. նա արդէն փրփուրներից էր կախուած:

- Անկախութեան ձեռքբերումներից մէկը հենց անկախ մամուլն էր. այսօր կարո՞ղ ենք ասել, որ ունենք անկախ մամուլ, անկախ հեռուստատեսութիւն:

- Մենք չունենք անկախ մամուլ, անկախ հեռուստատեսութիւն: Զկայ նաեւ միտում դէպի ազատ մամուլ, որովհետեւ փող վաստակելու այն վարակը, որ տարածեց Քոչարեանը, մթազնել է բոլորի մտքերը, եւ բոլորը զբաղուած են փող աշխատելով: Հեռուստատեսութիւնն ու մամուլը վերածել են բիզնեսի, ու դրանից բացի այլ բան չեն պատկերացնում: Իսկ ես գտնում եմ, որ այս երկիրը այսպիսի վիճակում է այն պատճառով, որ չունի սեփական գաղափարախօսութիւնը, ինչը պէտք է պաշտպաներ մամուլը եւ հեռուստատեսութիւնը:

Այն, ինչ անում է այսօր հեռուստատեսութիւնը, դրա հետեւանքը տեսնելու ենք 10-20 տարի յետոյ: Այն դեգրադացիան, գաւառական մտածելակերպը, որ ներարկում են ու եթէ շարունակեն ներարկել հեռուստաընկերութիւնները, մեզ գրկելու է դեկավարներ, գիտնականներ, մտաւորականներ, արուեստագետներ ունենալուց:

- Խօսքի ազատութեան ոտնահարումները, լրագրողների, ընդդի-

մադիր գործիչների նկատմամբ բռնութիւնները կարելի է ասել, որ սկսուեցին «Ա1+»-ի եթերազրկումից: Կարո՞ղ ենք ասել, որ «Ա1+»-ի վերաբացումով դրանք կը վերանան:

- Դժուար է ասել, «Ա1+»-ը իր առջեւ մի խնդիր ունի: Նա պէտք է ստանձնի խօսքի ազատութեան հարցում դրօշակակրի դերը, որովհետեւ պրակտիկան ցույց տուեց, որ մենք հաւատարիմ մնացինք մեր սկզբունքներին եւ կը շարունակենք այդպէս աշխատել: Եթերը մեզ համար ոչ միայն բիզնես է, այլեւ ծառայում է դաստիարակչական նպատակի, հայրենասիրութեան, եւ ընդհանրապէս՝ պէտք է ծառայի ժողովրդին, ոչ թէ անձին:

- Քանի որ «Ա1+»-ը դիտուում էր որպէս Քոչարեանի թշնամի, բոլորը սպասում էին, որ Սերժ Սարգսեանը իշխանութեան գալով կը բացի «Ա1+»-ը: Բայց արդէն 2 տարի նա իշխանութեան է, եւ չնայած Ես պահանջներին, Սերժ Վառդի, չի բացում հեռուստաընկերութիւնը: Ինչու՞:

- Ես ենթադրում եմ, որ Սերժ Սարգսեանը դեռ զբաղուած է մի խնդրով. մաքրում է Ռոբերտ Քոչարեանի կեղտերն ու հետքերը այս երկրում, ու երեւի դեռ մի քանի տարի էլ դրանք պէտք է մաքրել: Զգիտեմ էլ՝ Սերժ Սարգսեանը կը մաքրի, թէ այլ մէկը, որ կը փոխարինի նրան: Իսկ որ նրան փոխարինելու են, դրանում էլ եմ համոզուած, որովհետեւ Սերժ Սարգսեանն էլ կը յոգնի այդ կեղտը մաքրելուց:

Ես մտածում եմ, որ Սերժ Սարգսեանը ժամանակ չի ունեցել «Ա1+»-ին անդրադառնալու, հիմա լաւ պատրուակ է մտածելու եւ որոշում կայացնելու, չնայած համոզուած եմ, ինչ որոշում էլ կայացուի՝ «Ա1+»-ը միեւնոյնն է յաղթելու է: Եթէ արտօնագիր էլ չստանայ, յաղթելու է, ինչպէս միշտ:

- Ի դէպ, այսօր չանդրադարձաք ՀՈԱՀ նախագահ Գրիգոր Ամալեանին, ինչու՞:

- Դէ, նա խեղճ ու կրակ, կատարածու զինուորիկ էր Քոչարեանի ձեռքին: Հիմա արդէն ժամանակն է՝ իրեն իրենց անուններով կոչելու. Ամալեանից ոչինչ կախուած չէր: Որոշումը կայացուած էր առաջին դէմքի մակարդակով:

## ՍԵՐՃ ՍԱՐԳՍԵԱՆ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՊԻ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 1-էն

լուն, որը նաեւ Թուրքիայի առաջին փոխարտգործնախարարն է, եւ որին այսօր կ'ընդունի Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը, եւ նաեւ հանդիպում տեղի կ'ունենայ Հայաստանի Հանրապետութեան արտգործնախարարի հետ», - փոխանցեց Նալբանդեան:

Պատասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի այն հարցին, թէ արդե՞օք կողմերու միջեւ արդէն համաձայնութիւն կայ Հարաբար շրջապատող հինգ շրջանները Ատրպէյճանին վերադարձնելու վերաբերելու, Նալբանդեան պատասխանեց, որ առանց Լեւոնային Հարաբարի կարգավիճակի հարցի

լուծման մնացած հարցերը դժուար թէ ինչ-որ լուծում գտնեն:

«Դա ոչ միայն Հայաստանը՝ համանախագահներն էլ են հասկանում եւ բոլորն են հասկանում, որ գլխաւոր հարցը հիմնախնդրի Ղարաբաղի կարգավիճակի հարցն է, Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման ճանաչման եւ այդ իրաւունքի հարցի լուծման մնացած հարցերը դժուար թէ ինչ-որ լուծում գտնեն», - ըսաւ Նալբանդեան:

Միւս կողմէ, Թուրքիոյ վարչապետ Ռեջէօ Էրտողան Փարիզի մէջ յայտարարած է, որ Ուաշինգթոնի մէջ Հայաստանի նախագահի հետ հանդիպումը կախուած է Երեւանէն ստացուելիք պատասխանէն:



ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹԱԼԱՆՈՂՆԵՐԸ-4

ԼՈՒՍԻՆԷ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Հայաստանը թալանող պաշտոնեաների հերթական ցուցակին է երկն տպագրուել ուսական մամուլում: Այս անգամ ՀՀ բարձրատիճան պաշտոնեաների միլիոնավոր տոլարների հասնող ունեցուածքին անդրադարձել է «The Moscow post» պարբերականը: «Ռուսաստանը գազի գինը Հայաստանի համար բարձրացրեց 7 տոկոսով, իսկ հայ չինովնիկները յաջողացրին բնակչության համար այդ գինը բարձրացնել մոտ 40 տոկոսով», սոյն վերտառութեամբ յօդուածի տակ այս անգամ խօսքը երեւանի քաղաքապետ Գազիկ Բեգլարեանի, ԲՀԿ առաջնորդ Գազիկ Ծառուկեանի եւ մի շարք այլ պաշտոնեաների մասին է:

Գազիկ Բեգլարեան՝ Զոռնի Գազօ



Երեւանի ՀՀԿ-ական քաղաքապետ Գազիկ Բեգլարեանը, ըստ ուսական լրատուամիջոցի, ունի պիզնես հետաքրքրութիւններ մի քանի ոլորտներում՝ թեթեւ արդիւնաբերութիւն (մի քանի տրիկոտաժի ձեռնարկութիւնների սեփականատէր է), շինարարութեան համար հողերի առուծախ, անօրինական շինարարութիւն՝ հիմնականում Երեւանի կենտրոնում եւ կանաչ գոտիներում: Նա սերտօրէն կապուած է կրիմինալի հետ: Վերջին շրջանում փորձում է իր բարեկամներին ու մտերիմներին ղեկավար աշխատանքի տեղաւորել Երեւանի համայնքներում: «The Moscow post»-ը յիշեցնում է նաեւ, որ պետական գնումների գործակալութեան ղեկավարը Գազիկ Բեգլարեանի եղբայր Յակոբ Բեգլարեանն է:

Կարէն Կարապետեան



Ծագումով դարբաղցի «Հայ-ուսագազարդի» տնօրէն Կարէն Կարապետեանը, ըստ ուսական պարբերականի, ՀՀ գազայնականացման գլխավոր «նախնի» է, ում միջոցով լցւում են նախեւառաջ Ռոբերտ Քոչարեանի ու Գազիկ Ծառուկեանի գրպանները: Հրապարակման մէջ յիշեցում կայ նաեւ, որ 2008-ի նախագահական ընտրութիւններից առաջ Քոչարեանին մեղադրում էին «Հայուսագազարդի» 170 մլն տոլար գողանալու համար: Ըստ «The Moscow post»-ի, Կարէն Կարապետեանը վերահսկում է պլաստմասէ խողովակների արտադրութեամբ զբաղուող կազմակերպութիւն, որի արտադրանքը օգտագործւում է գազի փիկացման ժամանակ: Նա շուկայից դուրս է մղել տնային տնտեսութիւններում գազային համակարգերի սպասարկմամբ զբաղուող 8 մասնաւոր կազմակերպութիւնների, բացառութեամբ՝ «Ալշիդ» ընկերութեան, որը, ի հեծուկս մոնոպոլիստ ընկերութեան տնօրինութեան ճնշումների, կարողացել է գոյութիւնը պահպանել շուկայում:

Սամուէլ Ալեքսանեան



Աժ պատգամաւոր Սամուէլ Ալեքսանեանը, մականունը՝ Լֆիկ Սամօ: Ըստ ուսական պարբերականի, այս մականունը նա ստացել է կանացի ներքնագրաստների բիզնեսով զբաղուելու արդիւնքում, երկրի ամենահարուստ անձանցից է

եւ երկրի ղեկավարի վստահելի օլիգարխներից մէկը: Նա, ըստ «The Moscow post»-ի, Ռոբերտ Քոչարեանի աւագ որդու՝ Սեդրակ Քոչարեանի բիզնես-պարտնյորն է բջջային հեռախօսների ՀՀ ներկրման գործում: Միանգամից մի քանի խանութների ցանցի սեփականատէր է՝ «Երեւան սիթի», «Լուսաստղ», «Կայսր»: Աւարտին է հասցնում Շիրակի մարզում շաքարի ճակնդեղի գործարանի շինարարութիւնը: Զի խորշում ուկրաինական եւ ուսական օդիների յայտնի ապրանքանիշերի կեղծումից: Հայաստանում 7 դեղագործական ֆիրմայի սեփականատէր է, որոնք նոյնիսկ տնտեսական մրցակցութեան պետական ծառայողի տուեայներով, բարձրացնում են ներկրուող դեղորայքի գները: Նա ունի ամենաբազմամարդ եւ լաւ գինուած թիկնագօրը Հայաստանում: Պարբերաբար հաւատարմութիւն եւ լոյսլութիւն է ցուցադրում նախագահին եւ միաժամանակ անգուծ է իր մրցակիցների եւ առաւել եւս ընդդիմութեան հանդէպ: Նա կատարում է «իշխանութեան մահակի» դերը:

Գազիկ Ծառուկեան



ԲՀԿ առաջնորդ Գազիկ Ծառուկեանը, ըստ ուսական ԶԼՄ-ի, լինելով ՆԳՆ աշխատակից, դատապարտուել է բռնաբարութեան համար եւ պատիժը կրել է: Ծառուկեանին է պատկանում «Մուտի գրուպ» կոնցեռնը, որը բաղկացած է մի շարք ձեռնարկութիւններից՝ Աբովեանի «Կոտայք» գարեջրի գործարանը, Աբովեանի չափիչ գործիքների գործարանը, Երեւանի ղեղադրածական ֆիրման, «Մեկ» կահույքի խանութների ցանցը, «Աւիսերվիս» ԲԸ-ն, «Մուտի լեոն» բենզագազայնականների ցանցը, քարի վերամշակման «Մուտի սթոուն» ընկերութիւնը, գինու, կոնյակի եւ օղու «Արարատ» գործարանը, Արարատի ցեմենտի գործարանը, ունի բազմաթիւ այլ ակտիւներ, իսկ որոշ ոլորտներում մենաշնորհ է հաստատել: Օրինակ, նրա ընտանիքը գրեթէ ամբողջութեամբ վերահսկում է մեղրի արտադրու-

թիւնը Հայաստանում՝ շուկայից դուրս մղելով անկախ արտադրողներին: Իր մարդկանց միջոցով վերահսկում է «Կենտրոն»ի հեռուստաընկերութիւնը, ակտիւներ ունի ԱՊՀ եւ Հարաւային Եւրոպայի երկրներում, ինչպէս նաեւ Պալքաններում: 1997թ-ից մինչ օրս Ռոբերտ Քոչարեանի գլխավոր բիզնես-գործընկերն է: Ակտիւների ենթադրուող չափը ոչ պակաս, քան 1 միլիարդ ԱՄՆ տոլար է:

Սիխայի Բաղդասարով



Ծնունդով պաքուցի Բաղդասարովը ՌԴ-ից ՀՀ է եկել 1997-ին՝ Քոչարեանի վարչապետութեան ժամանակ: Երկրի ղեկավարութեանը ներկայացուել է որպէս մարդ, ով մեծ կապեր ունի ուսաստանեան բիզնես էլիտայի հետ, ինչը պէտք է նպաստի 2 երկրների միջեւ տնտեսական համագործակցութեանը: Իրականում, Բաղդասարովը չի ունեցել ոչ մի մեկնարկային խոշոր կապիտալ: 1998-ից իշխում է ՀՀ բենզինի եւ ընդհանրապէս ՀՀ նաւթամթերքների շուկայում: Քոչարեանի եւ Սարգսեանի ղեկավարութեամբ (վերջինիս կարգադրութեամբ Բաղդասարովի հետ համագործակցել է մաքսային ծառայութեան պետ Արմէն Աւետիսեանը), ղեկավարութեամբ շուկայից դուրս է մղել բոլոր իր կողմից չվերահսկուող նաւթամթերք ներկրողներին: Բաղդասարովն ու նրա «Միկա» ընկերութիւնը զբաղուել են խոշոր մատակարարումներով՝ մինչեւ Ալյում կայարան, ուր բենզինն ու դիզելուելիքը վերամշակուում էին Սարգսեանի կողմից վերահսկուող 5 ընկերութիւնների, որոնք էլ զբաղուում էին մանրածախ վաճառքով: Այն մի քանի ամիսներին, երբ վարչապետի պաշտօնը զբաղեցնում էր Վազգէն Սարգսեանը, Բաղդասարովը գրկուեց մենաշնորհից, եւ շուկա վերադարձան այլ մատակարարներ: Հոկտեմբերի 27-ի ահաբեկչութիւնից յետոյ մինչեւ 2000-ի վերջը Բաղդասարովն ամբողջութեամբ վերականգնեց իր գերակայ դիրքերը նաւթամթերքի

Շաբ.բ էջ 17

Advertisement for Anthem Blue Cross insurance, featuring the text 'AUTHORIZED INDEPENDENT AGENT Anthem Blue Cross' and 'BEDROS S. MARONIAN 818-500-9585'. It also includes contact information for CA LIC.#0494056 and BMaronian@AOL.com, and a cartoon illustration of a man in a suit.



ԱՐԽԻ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԱԾ ՈՒ ԶՄԵԿՆԱԲԱՆՈՒԱԾ ԶԱՐՑԵՐ

ՏՈՒՔԹ. ԵՂԻԿ ՃԵՂԵՃԵԱՆ

«Ազգակ»ի 12 Մարտ 2010-ի թիվին մէջ, Ժազ Յ. Յակոբեան իր «Պատմական ճշմարտութիւններ եւ Անոնցմէ Քաղուելիք Դասեր» յօդուածին մէջ կը շոշափէ հայոց նորագոյն պատմութեան համար կարեւոր, հետաքրքրական եւ իրապէս որ «դասեր քաղելիք» հարցեր, սակայն տեղի կու տայ պատմական սխալներու եւ թիւրիմացութիւններու: Ստորեւ կ'ուզենք անդրադառնալ հոն տեղ գտած կարգ մը «պատմական անճշմարտութիւններուն»:

Ժ.Յ. Յակոբեան կը պաշտպանէ այն տեսակէտը որ Կարսի պայմանագրին մէջ (921 Հոկտեմբեր 13), Թուրքիոյ եւ Նախիջեւանի ինքնավար Հանրապետութեան միջեւ սահմանային կապ գոյութիւն ունեցած չէ եւ այդ սահմանը յառաջ եկած է աւելի ուշ, երբ Թուրքիոյ եւ Պարսկաստանի միջեւ հողային փոխանակումներ տեղի ունեցած են:

Նախ ըսենք, որ այս տեսակէտը նորութիւն չէ: Մենք այս տեսակէտին առաջին անգամ հանդիպած ենք փրոֆ. ձոր Կիրակոսեանի մօտ. հանգուցեալ պատմաբանը կը գրէր. «Պայմանագրի մէջ (խօսքը կը վերաբերի Մոսկուայի պայմանագրին. Ե. ձ.) յատուկ յօդուած մտցուեց, ըստ որի Նախիջեւանի մարզը պէտք է ինքնավար Դերիտորիա կազմէր Ատրպէյճանի «ինքնավարութեան ներքոյ»: Այս քայլը ցոյց էր տալիս, որ Թուրքիան չէր հրաժարուել փանթուրական ծրագրից: Մանաւանդ յետագայում Թուրքիան հսկայական դերիտորիա գիջեց Պարսկաստանին, դրա փոխարէն ստանալով Նախիջեւանի հետ անմիջական սահման ունենալու հնարաւորութիւն»: (1)

Այս տեսակէտը կը պաշտպանեն հաջ թէ օտար շատ մը հեղինակներ, որոնց շարքին կարելի է չիշել փրոֆ. ձոր Պուռնութեան (2), փրոֆ. Ռոպերթ Հիւան (3), տոքթ. Մուհամմէտ Ռիֆաադ Ալ Իմամ (4), Էմմա Բեգիճանեան (5), Շիրիրն Հանթր (6) եւ ուրիշներ:

Մենք եւս, ինչպիսի պայմանաւորութեան տակ եւ գտնելով որ հեղինակաւոր պատմաբաններու կողմէ պաշտպանուած այս տեսակէտը չաւելեալ ստուգումներու կարիքը չունի, մեր աշխատութիւններէն մէկուն մէջ պաշտպանած ենք այս տեսակէտը (7): Սակայն, աւելի ուշ, հանդիպած ենք այս տեսակէտին հակադրուող տեսութեան, ըստ որուն, Թուրքիա-Նախիջեւան սահմանագիծին յառաջացումը կապ չունի 1932 եւ 1938 թուականներու Թուրքիոյ եւ Պարսկաստանի միջեւ եղած հողային փոխանակումներուն հետ եւ այդ սահմանը գոյութիւն ունեցած է չիշեալ փոխանակումներէն շատ առաջ: Այս տեսակէտին հանդիպած ենք փրոֆ. Յակոբ Փափագեանի (8) եւ փրոֆ. Արա Մանճեանի (9) մօտ: Տեսակէտներու տարբերութիւնը ստիպուած է մեզի կատարել յաւելեալ պարզումներ, որոնց որպէս արդիւնք համոզուած ենք երկրորդ տեսակէտին մէջ ու ինքնարբարման համար այդ պաշտպանած ենք տարբեր յօդուածներու մէջ (10):

Մեր այն համոզումը որ Թուրքիա-Նախիջեւան սահմանագիծը կապ չունի Թուրքիա-Պարսկաստան հողային փոխանակութեան հետ՝ գոյացուցած ենք աւելի քան

տասը փաստերու վրայ, որոնց երկուքը կու տանք ստորեւ:

Առաջին փաստը նոյնինքն Կարսի պայմանագրին է: Պայմանագրին յաւելուած 1-ով մանրամասնորէն կը նկարագրուի սահմանագիծը մէկ կողմէ Թուրքիոյ եւ միւս կողմէ Վրաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի ՍՍՀ-ներուն միջեւ: Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանը կ'երկարի մինչեւ Ուրմիա գիւղը «որտեղ վերջանում է սահմանը Հայաստանի հետ եւ սկսուած է սահմանն Ատրպէյճանի հետ - այնուհետեւ յառաջանում է Արաքսի հնահունով մինչեւ այնտեղ, որ Արաքսի մէջ թափուած է Ստորին Քարա Սուն, որտեղ աւարտուած է սահմանը Ատրպէյճանի հետ» (11): Այդ ի՞նչ սահմանագիծ է որ Թուրքիան կը միացնէ Ատրպէյճանին, եթէ ոչ Թուրքիա-Նախիջեւան (որ արդէն Մոսկուայի պայմանագրով դրուած էր Ատրպէյճանի հովանաւորութեան տակ) սահմանագիծը: Այս սահմանագիծէն զատ Թուրքիան ոչ մէկ սահման ունի Ատրպէյճանի հետ եւ եթէ Թուրքիա-Նախիջեւան սահմանը 21 Հոկտեմբեր 1921-ին գոյութիւն չունենար, Թուրքիա-Ատրպէյճան սահմանի մը մասին խօսիլն անգամ անհեթեթ կը դառնար: Կարսի պայմանագրով նկարագրուած Թուրքիա-Ատրպէյճան սահմանագիծն ալ նոյն Թուրքիա-Նախիջեւան սահմանագիծն է որ գոյութիւն ունի մինչ եւ այսօր: Այս աչքառու եւ կասկածներու տեղի չտուող ապացոյցն է, որ տանք փաստ մը եւս: Ռուբէն Տէր Միխսեան «Դրօշակ»ի 1925 Մեպտեմբերի թիւին մէջ կը ներկայացնէ Նախիջեւանի պատկանելիութեան շուրջ տեղի ունեցած պատերազմական եւ դիւանագիտական գործողութիւնները, ապա, ներկայացնելով Ատրպէյճանի սահմանները, ան կը գրէ. «Այսպիսով նախկրայը (Նախիջեւանի կրայ-Նախիջեւանի մարզ.՝ Ե.ձ.) երեք քառորդ մասով շրջապատուած է Հայաստանով, հարաւէն՝ Պարսկաստանով եւ փոքրիկ կտորով մըն ալ Տաճկաստանով» (12): Կը խորհիմ թէ տարակոյս չի մնար որ Թուրքիա-Նախիջեւան սահմանագիծը ոչ մէկ կապ ունի Թուրքիա-Պարսկաստան հողային փոխանակման հետ եւ այն գոյութիւն ունեցած է մինչ այդ:

Փակելէ առաջ այս բաժինը, նշենք թէ Ժազ Յ. Յակոբեան իր յօդուածին կցած է անգլիատառ քարտէս մը, ուր Թուրքիա-Նախիջեւան սահմանագիծը չէր եւ չէր եւ այդ ծանօթագրած է «Կարսի դաշնագրի բուն քարտէսը, ուր Թուրքիա-Նախիջեւանի հետ ուղղակի սահման չունի»: Առաջին հայեացքին իսկ յստակ կ'երեւայ թէ ներկայացուած քարտէսը կապ չունի Կարսի պայմանագրին հետ, այդ շատ սխեմատիկ է եւ հոն նշուած չեն ո՛չ գետերը, ո՛չ ալ աշխարհագրական ռելիեֆը՝ որոնք երկու երկիրներու միջեւ սահմանագիծը ճշգրտորոշող ամենէն կարեւոր աշխարհագրական տուեալներն են: Այսպիսի քարտէսներու հանդիպած ենք այլ առիթներով եւս: Օրինակի համար, Զաւէն Մսրըլեան կը ներկայացնէ քարտէս մը, ուր նշուած են Թուրքիոյ եւ Պարսկաստանի միջեւ փոխանակուած հողային տարածքները՝ որմէ կարելի է եզրակացնել թէ հողային այս փոխանակումէն ետք է որ յառաջ եկած է Թուրքիա-

Այս մասին վերջին խօսքը պիտի տանք Սովիէթ Միութեան քայքայման գլխաւոր պատասխանատու եւ վերջին նախագահ Միխայիլ Կորպաչովին, որ երկու լրատու աղբիւրներու հետ հարցազրոյց ունեցած է: Առաջինը՝ Ռուսական «Կոմերսանտ» թերթին հետ, ուր կ'ըսէ. «Յեղափոխութեան ժամանակ եւ անկէ ետք որոշուեցան արտաքին եւ ներքին սահմանները եւ բաժնուեցան հողեր: Եւ այնպէս բաժնուեցան որ հարեւանները միշտ բախում ունեցան իրարմէ, որպէսզի հնարաւոր ըլլայ հակամարտութիւն սերմանել, իսկ Մոսկուային հաշտարար նշանակել «Ես միշտ ըսած եմ որ ազգային գետնի վրայ տեղի ունեցող նման հակամարտութիւններ չեն կրնար լուծուիլ, եթէ կողմերն մէկը յաղթող ըլլայ, միւսը՝ պարտուող: Երկու կողմերը պէտք է ընդհանուր յայտարարի գան» եզրակացուցած է Պրն. Կորպաչով: Սակայն այս անկեղծ ու պարկեշտ խոստովանութեան եզրակացումը կը մնայ անպարկեշտ, երբ ան աւելի յառաջ չերթար ճշդելու թէ որո՞ւն հողը որոն տրուած էր եւ ինչո՞ւ:

Հետաքրքրական խոստովանութիւններ կատարած է Կորպաչով: Օրինակ, «Ես առաջարկում էի Ղարաբաղին տալ հանրապետական կարգավիճակ: Ատրպէյճանի այդ ժամանակուան ղեկավարը վեզիրովն էր կարծեմ, որ ուզում էր համաձայնել, բայց չստացուեց»: Ինչո՞ւ չստացուեց: Ամենագոր Ս. Միութեան մաս կազմող Ատրպէյճանը ինչպէ՞ս կարեւոր է որ չենթարկուէր Մոսկուայի հրահանգին, եթէ անկեղծ էր ան եւ եթէ նենգութիւն չկար գործադրութեան մէջ: Կորպաչով կը խոստովանի նաեւ որ «Ղարաբաղի հարցը Սովետական պետութեան սխալ քաղաքականութեան հետեւանքն էր: Այդ ժամանակ գուցէ հնարաւոր լինէր խնդիրը կարգադրել, իսկ հիմարդէն հնարաւոր չէ պատկերացնել որ Ղարաբաղը նորից լինի Ատրպէյճանի կազմում»:

Այս արտաքին խոստովանութեանց յառաջ բերած ներողատուութեան ու

#### ԱՐԱՄ ՍԵՓԵԹՅԱՆ

Գարնանամուտը բնութեան մէջ հրաշագեղ պահեր կը պարգեւէ մեզի: Գիտնանք ըմբռնենք զայն:

Ծառերը կրկին կը կանաչապատուին:

Կեանքը կը վերանորոգուի:

Նոյնիսկ, մայթերու սալաշատակումի ընթացքին գոյացած բարաւիկ երիզները հողին, կանաչ ծիւրեր կ'արձակեն ու կը շրջանակեն քառակուսի սալաքարերը:

Մինչ բնութիւնը, ամէն քայլափոխի մեզի կ'ընկերակցի իր խոհերով ու խորհուրդներով. մարդ-աշխարհագրագետութիւնը, իր կրօնա-իմաստասիրական մտածումներով, Քրիստոնէական աշխարհին կը մատուցանէ Սուրբ Յարութեան գաղափարախօսութիւնը: Խորքով կրօնական, իր ընդհանրութեանը մէջ խորապէս մարդկայնական, մեզի կը պարգեւէ գիտակցութիւնը բառը՝ բանի ու բանականութեան վերածելու:

Այս վերափոխումը, դուք ըսէք վերակերտումը՝ որ »Վեր է քան զամենայն միտս եւ զբանս«, Հայուն հոգեկան աշխարհին մէջ կը բանայ լուսամուտ մը, որուն լոյսը կ'ողողէ մեր ներաշխարհը՝ Մեծ Վարդապետին Հրաշափառ Յարութեան տօնին բարոյագիտական հիմունքներու յաղթանակով: Ու կը լիանայ մեր հոգին գեղեցիկի ու վսեմի անկորնչելի գեղեցկութեամբ:

Ծիլ ու ծաղիկ, ներքին ծաղկազարդումին մաս կը կազմեն ու բանաստեղծը կը վերածեն բնութեան երգիչին:

Իր մարդեղութեամբ՝ Աստուածորդին կը մտնէ մեր մտածումներէն ներս, եւ Աւագ ուրբաթօրեայ իր գերեզմանաքարին տապալումով իմացապաշտ մարդուն կը ներշնչէ Յարութեան անմեկնելի խորհուրդը:

Պատահականութեան արդիւնք չէ ուրեմն, որ Հայ ժողովուրդը այս տողերուն մէջ կը գտնէ իր կեանքին Գիրքը որ կ'ըլլայ Լոյս, ճշմարտութիւն ու ճանապարհ բազմադարեան: Իսկ Յարութեան ըմբռնողութիւնը՝ կը վերածուի կրօնական վարդապետութեան եւ ընտրեալներու մօտ՝ երաշխիք մը ամէնօրեայ կենսագործումի: Կ'ըլլայ ներքինախօսութիւն եւ աղօթասացութիւն:

Կ'ապրինք արդի մտածողութեան յատուկ եղող այնպիսի ժամանակի մը մէջ, երբ կրօնա-բարոյական

համակրական զգացումներուն աւերթեր չենք կրնար հարց չտալ ամենագոր Ս. Միութեան ամենագոր նախկին ղեկավարին, թէ ինչո՞ւ ուրեմն չգործադրեցիր վերոյիշեալ մտածումները, կամ գէթ մէկ մասը անոնց, ինչ որ կը վերաբերէր Ղարաբաղին, որ-

սկզբունքներ կը քարոզուին կամ կ'ուսուցուին մեզի իբրեւ »գիտելիք« միայն: Ապա՝ կը վերածուին տօնական օրերու ծիսական բարեմաղթութիւններու: Մինչ՝ ինքնամաքրման մեր ներքին զգացումները պէտք է առաջնորդեն մեզ դէպի Լոյսն ու ճշմարտութիւնը:

Յարութեան ոգին եւ շունչն է որ պէտք է վերականգնէ աշխարհը ղեկավարող ուժերու հոգե-բարոյական սկզբունքայնութիւնը: Ազգամիջեան հաւաքական յարաբերութիւններուն սկզբնաղբիւրը՝ հարկ է որ ըլլայ համերաշխ Արդարութիւն մը ԻՐԱՐՈՒ նկատմամբ: ԻՐԱՐՈՒ որ կ'ըսենք, հեռու է կրօնական թէ ցեղային-ազգայնական սահմանումներէ եւ սահմանափակումներէ:

Գրուած է, թէ ԲԱՆը մարմին առաւ »ի լրումն ժամանակի«: Այսօր ալ մարդկութիւնը կ'ապրի այն հեռաւոր ժամանակներու մթնոլորտին մէջ, որ անհրաժեշտօրէն կարիքն ունի վերափոխուելու, մարդանայու, գարշահոտ տիղմի եւ ապականութեան գերեզմանաքարը դուրս շարտելու, եւ անտառային վայրի օրհնքը անէպցնելու:

Աշխարհի բազմացեղ ու բազմազգ միխառուար մարդկութիւնը առաջնորդելու կոչուած գիտութեան հանձարեղ ուղեղները, հեռաւոր մոլորակներու փնտռողներին գիտը սկսելէ առաջ, հարկ է որ գտնեն սիրտէ-սիրտ հաղորդակցութեան գաղտնի ճանապարհը, գիտնան ու կարենան խօսիլ իրարու հետ, գրուցել այս աշխարհին հոգեմտաւոր ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ ՄԸ պարգեւելու մասին:

Այն ատեն է որ պիտի իրականանայ՝ Մարդեղութիւնը ԲԱՆին, որ »մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ«, որ իր կեանքի օրինակով՝ »Յարեա՛ւ ի մեռելոց«, որպէսզի մենք եւս կարենանք հեռու շարտել ապականութեան ու մեղքի տապանաքարը եւ ներքուտ ապրել մեր կեանքը ծաղկազարդող Յարութեան տօնը:

Եւ այս՝ ո՛չ միայն իբրեւ հայ քրիստոնէաներ, այլեւ մարդկային ամբողջ ընտանիքը - իր կրօնական բոլոր շարժումներով - պիտի դիմէ դէպի համամարդկային փոխադարձ սիրոյ եւ յարգանքի վեհագոյն աշխարհագրագետութիւնը... այլապէս՝ որո՞ւն համար պիտի զօղանջեն տօնական օրերու գանգերը յաւերժախօս Լոյսի ու ճշմարտութեան, ԲԱՆի մարդեղութեան եւ յարութեան խորհուրդին:

պէսզի, այսօր իբրեւ պետութիւն ճանչցուելու դժուարութեան առջեւ չգտնուէր ոչ թշնամիներուն եւ ոչ իսկ բարեկամներուն կողմէ:

Եթէ անշուշտ, այս բոլոր արտաքինութիւնները դասականացած կեղծիքին շարունակութիւնը չեն:



## ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

ՊԵՏԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՄԵՐ ԱԶՆՈՒԱՓԱՅԼ ՄԱՅՐԵՐՈՒՆ ԵՒ ՅԱՐԳԱՐԺԱՆ ՀԱՅՐԵՐՈՒՆ

Տեղի կ'ունենայ Երեւան, 17 Ապրիլ 2010  
 երեկոյեան ժամը 7.30-ին  
 Կրկնակի Հանրային Գրադարանի սրահին մէջ  
 222 E. Harvard Avenue, Glendale

— ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ —

ՄՈՒՏՔԸ՝ ՀՐԱՒԵՐՈՎ ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ



# ԱՊՐԻԼԵԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵԿՈՅ

## Ռ. ԿՈՐԻԻՆ

Ցալի եւ հառաչանքի Ապրիլ-եան օրեր,  
Տառապանքի եւ կոտորածի ամիս,  
Սեւ քօղով պատած 1915,  
Պատմութիւնը մեր այդ ողբալի,  
95 տարիների անցեալով  
Դատը մեր մնում է անլոյծ:  
Ցաւ ու կսկիծ սրտեր հայու-թեան,  
Անմահ մահատակների կանգը անկատար,  
Արդարութիւն, արդարութիւն ի լուր արողաց  
Պահանջն է մեր մահատակների:

Գրական հերթական հանդիպում էր, նուիրուած ցեղասպանութեան: Ոգեկոչման երեկոյ, խորհրդածութիւններ եւ յիշեցումներ բերաւոր նահատակների՝ մեր 1.5 միլիոնից աւելի անմեղ զոհերի մասին, թէ ինչպէս նրանք վայրենաբար կոտորուեցին 1915-1923 տարիներին, թէ ինչպէս թալանի ու կողոպուտի ենթարկուեց մեր ժողովրդի ունեցւածքը եւ բռնագործակց հայրենի երկիրը: Մտաբերելով այդ բոլոր արհաւիրքներն ու կորուստները՝ անկախ իրենից մարդ զայրանում է, սարսուռ է անցնում մարմնով, որպէս անթեղւած կրակ բորբոքում է հոգիդ ի տես դահիճը անպատիժ դեռ յոխորտում է, այդու մարդ կարիք է զգում վերանորոգելու իր ուխտը, վերալիցքաւորելու իր ուժերն ու կարողութիւնները պահանջատիրութեան աշխատանքի վերաբերեալ:

Ահա մեր պատմութեան ամենատրեմալ կողմերէն էլ յիշելու մտադրութեամբ կազմակերպւել էր երեկոյ, ազատ բեմ, որպէսզի ցանկացողներ ընթերցեն իրենց գրու-

թիւնները նւիրուած մեծ կոտորածին, որի համար 95 տարի է մեր սրտերը մղկտում են անամոք եւ անպատասխան նահատակների կանչին...

Հինգշաբթի Ապրիլ 1, 2010 թիւ, յետ միջօրէի ժամի 5, Գլենդէյի հանրային գրադարան, ուր ներկայ էին գտնուել գրողներ եւ հիւրեր: Երեկոն գովազդուած էր աւագ հինգշաբթի օրւայ Յիսուսի չարչարանաց եւ խաչելութեան, ինչպէս Յիսուս անմեղօրէն մոլեռանդ հրեաների կողմից խաչ հանուեց Գողգոթայում, նոյնպէս եւ մեր քոյր եւ եղբայրները արեւմտեան Հայաստանում անզամներ Գողգոթա բարձրացան: 1915 թիւ Ապրիլը ամենասարսափելին էր:

Ջարդերից մազապուրծ ազատուած խլեակները ցիր ու ցան եղան աշխարհի չորս կողմերը, նրանք ապաստան գտան բարեխնամ եւ մարդասէր երկրներում շարունակելով իրենց կեանքը դժուար ու ծանր, տաժանելի կեանք փրկւածների համար, կեանքը քառու ու տառապանք էր դարձել, ամէն ռոպէ հարազատների սպանութիւնը, քաղցից ու չարչարանքից մահը իրենց աչքների առջեւ, նրանց աղաչանքներն ու պաղատանքները մի պուտ ջրի ու մի պատու հացի համար, երեխաների ճիչն ու աղաղակը, աղերսանքն ու լացը:

Այսպէս հազար - հազարաւոր հայեր գողթի ճամբաներում անխնայ սպանուեցին թուրք անասուածների կողմից: Թալանների ծրագիրն էր սա հայերին կոտորել եւ ոչնչացնել, այսպէս մի ողջ ազգաբնակչութիւն պետական ծրագրաւորումով ու կարգադրութեամբ տարբեր միջոցներով առանց նկատի առնելով սեռն ու տարիքը դաժանօրէն նախճիրի ենթարկուեցին:

Թուրքի ծրագիրն էր արմատախիլ անել հայութիւնը եւ տիրել ամբողջ Հայաստանին, նա դիմադրութեան հանդիպեց Արեւելեան Հայաստանի երեք ճակատներում: Օղբ ցնդեց թուրքի երազանքը, վիշապի երեք գլուխներն էլ ջախջախուեցին, յողթութիւնը մեզ բերեց ազատութիւն: Հայը մնաց Հայաստանով, կաղնին ծիլեր ու ճիւղեր արձակեց, վերածնուեց Հայաստանը, խաղաղութեան մէջ բազմացաւ, զարգացաւ, ամբողջ հայութեան յոյսն ու ապակէնը, որը պիտի արդարացնի մեր բոլորիս ցանկութիւնները եւ երազանքները միասնական ուժերով ցեղասպանութիւնը ճանաչեցնել տալու եւ տէր ու պաշտպան կանգնելու Սփիւռքահայութեան:

Երեկոյի մեկնարկումը կատարեց Կալիֆօրնիայի Հայ Գրողների Միութեան նախագահ բանաստեղծ Գրիշ Դաւթեանը եւ ի լուր ներկաներին յայտնեց հանդիպման շարժառիթի մասին: Գրիշ Դաւթեանը նոր վարչութեան կազմը ներկայացրեց: Սա նոր ընտրուած վարչութեան անդամներն էին: Նախագահն երեկոյի հանդիսավար ներկայացրեց արձակագիր գրող Պօղոս Գիւլպեյեանին:

Պօղոսը այս նստաշրջանի վարչութեան փոխ նախագահ է ընտրուել, նա ծանօթ գրող է մի շարք գրքերով եւ հրատարակագրութիւններով: Նա նոյնպէս ոգեկոչման խօսքեր ասաց Ապրիլեան եղեռնի յիշատակման առիթով, յիշեց Յիսուսի ոտնալապի արարողութիւնը, թէ ինչպէս նա լուաց աշակերտների ոտքերը որպէս խոնարհութեան եւ համեստութեան օրինակ եւ իր աշակերտներին յորդորեց նոյնը կատարել իրենից յետոյ: Պօղոսը այսպէս մեկնաբանեց ոտնալապի արարողութիւնը՝ «Յիսուսը նախքան խաչ հանուե-

լը, սիմբոլիք այդ արարքով, անկա ժամանակին եւ միջոցին մէջ արձակեց խոնարհութեան եւ համեստութեան ամենացալուն պատգամը՝ Քրիստոս Աստու Որդին, ամբողջ գրադարան մը արժող այդ իր արարքով»:

Ապա նա ուրախութեամբ լսարանին ներկայացրեց չորս յարգելի մտքի ու գրչի անձեր յանձինս՝ Յովհաննէս Ահմարանեան՝ պատմագիր եւ երգիծագիր, Խաչիկ Շահինեան՝ բազմաշնորհ երիտասարդ, Դանիէլ Թիւֆենկչեան՝ արձակագիր եւ Երւանդ Քոչունեան՝ բանաստեղծ եւ գրականագետ: Այնուհետեւ գրողները հերթականօրէն բեմ հրաւիրուեցին ելոյթի համար:

Քսան երեք հոգի կարդացին պատառիկներ իրենց գործերից, արտայայտուեցին եւ արտասանեցին՝ մտքերի, յուշերի, նկարագրութիւնների, բողոքների, պահանջարկների եւ առաջադրանքների մի հետաքրքիր կոմպոզիցիա, համադրութիւն ցեղասպանութեան առնչուող:

Ելոյթների շարանում Խաչիկ Շահինեանը գրողներին եւ մտաւորականութեան որակեց որպէս՝ «Գանձ»: Այն՝ երիցս այո՛, յանձնառու եւ նախանձախնդիր մտաւորականը հանդէպ մեր ազգային արժէքներին, ժողովրդի միասնականութեան, հայրենիքի բարգաւաճման եւ թերացումների ու անարդարութիւնների դէմ անվեհեր պայքարող իսկապէս որ գանձ է, որքան շատ, այդքան աւելի խաղաղ ու անդորր կեանք է սպասում ժողովրդի համար, տա՛ Ասուած առաւել շատ մտաւորական դեկավարներ ունենանք:

Այսպէս երեկոն խորհրդաւոր վերաթարմացրեց ու վերագործացրեց մեր ուխտը մեր անմեռ նահատակների հանդէպ մեզ մղելով աշխատել նրանց կտակը իրականացնելու ճամբին:

## ԳԱՐՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ ԿԻՊՐՈՍ

### ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ԴԱՍԸՆԹԱՅՔ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Կիպրոսի Խորհրդարանի հայ ներկայացուցիչ՝ Վարդգէս Մահտեսեանի նախաձեռնութեամբ այս տարուան Սեպտեմբերին Կիպրոսի Համալսարանին մէջ պիտի սկսին հայոց լեզուի դասընթացները: Այս կապակցութեամբ դիմում կատարուած է հայոց լեզուի ուսուցիչներուն ներկայացնելու իրենց ինքնակենսագրութիւնը Կիպրոսի համալսարանին մէջ աշխատանքի ընդունելու համար:

## ԼԻԲԱՆԱՆ

### «Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ԿԵԴՐՈՆԻ ԲԱՅՈՒՄ

Հայ Կաթողիկէ համայնքի Ներսէս Պետրոս Պատրիարքի հովանաւորութեամբ Պէյրութի ՀԿՄ-ի «Արարատեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Ս. Գրիգոր Նարեկացի» Կեդրոնի բացման հանդիսութիւնը: Բացման խօսքով հանդէս եկաւ Զուարթ Նաճարեանը: Ան նշեց, որ «Մէկ ազգ, մէկ մշակոյթ, մէկ ինքնութիւն» մէկ ժառանգութիւն, մէկ պատմութիւն ու ճակատագիր» սկզբունքով պէտք է առաջնորդուի հայ ժողովուրդը: Հանդիսութեան աւարտին ելոյթ ունեցաւ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը: Ան յաջողութիւն մաղթեց նորաստեղծ «Ս. Գրիգոր Նարեկացի» կեդրոնին, յոյս յայտնելով որ սոյն հիմնարկը յառաջիկային կ'արձանագրէ նորանոր նուաճումներ:

## ԹՈՒՐՔԻԱ

### ԿՐՕՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԹԱՍԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ

Անգարայի Նոյեան Տապան գործակալութիւնը կը հաղորդէ. Թուրքիոյ Մշակոյթի եւ Զբօսաշրջութեան նախարար էրթօղլու Կիւնայը ստորագրած է Վանի նահանգապետի դիմումը, որուն համաձայն հայերը տարին անգամ մը, Սեպտեմբերի երկրորդ կէսին, Վանի Աղթամար կղզիի Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ կրօնական արարողութիւն իրականացնեն:

Վանի նահանգապետը նշած է նաեւ որ այդ որոշումը կ'աշխուժացնէ Վանի հոգեւոր զբօսաշրջութեան զարգացումը. կը տեղեկացնէ թրքական «Միլլիէթ» թերթը:

**ՈԳԵԿՈՉՈՒՄ**  
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ  
Կազմակերպումը  
Պոլսոյ Միտրեան Մշակութային Յիմնադրոնի և Արարատ Տան Էպիման Քանգարոնի

**Բանասխօս՝**  
**ՓՐՕՖ. ՎԱՀԱԿՆ ՏԱՏՐԵԱՆ**  
Ելոյթ

**ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
95ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ**

Երեքշաբթի, Ապրիլ 13, 2010 Կրկնական ժամը 8:00ին  
ՀՐԸՄ ՄԱՆՈՒԿԵԼԵԱՆ-ՏԷՄԻՐՇԵԼԵԱ Վարձարանի «Կազմակերպչական կենտրոն»  
Տեղակայում՝ Տոքթ. Յովհաննէս Գոչալ Աւետիսեան կամ Էպիման Քանգարոն (818) 838-4862  
Գեղարուեստական յարաբերով կայք պիտի ունենայ ԱՆԻ ԲԱՅՈՒՄ  
Մուտքը Ազատ - Հեղափոխութիւն



THE CULTURAL COMMITTEE OF ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS  
AND THE ARARAT-ESKIJIAN MUSEUM

Present  
**A lecture in Armenian**

"REFLECTIONS ON THE OCCASION OF THE 95<sup>TH</sup>  
COMMEMORATION OF THE ARMENIAN GENOCIDE"

by  
Prof. Vahagn Dadrian  
Director of Genocide Research at the Zoryan Institute  
Tuesday April 13, 2010 - 8:00 p.m.

AGBU Manoogian-Demirdjian School's Agajanian Hall 6844 Oakdale Ave, Canoga Park 91306

• Admission free • Reception following program

With the participation of ANI QUARTET

For more information contact Dr. Ohannes Kulak Acedikyan at: (818) 800 - 1976  
The Ararat-Eskijian Museum at (818) 838-4862 e-mail [ayoschus@mindspring.com](mailto:ayoschus@mindspring.com)



### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆԻՐԵՆՊԵՐԿԻ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Շարունակում է 1-ին

ոններ գոհ գացին:

Արդար ըլլալու համար արձանագրեմ, որ եթե օսմանեան իրարմատի կողմէ հայ ժողովուրդի դէմ իրագործուած Ցեղասպանութիւնը Նիւրեմպերկեան մակարդակի դատավարութեան սեղանի վրայ չդրուեցաւ ցարդ, դատելու համար Անոր մեղապարտները, օսմանեան արիւնքաւանանցեալ մը ամբողջ՝ բայց այդ Ցեղասպանութեան նախնական, Դատապարտման եւ Հատուցման կապակցութեամբ պահանջատիրութեան շարժումները պետական մակարդակի վրայ, սկսան ալիք առ ալիք լայն տարածք ծաւալել աշխարհով մէկ: Տակաւին ամիս մը առաջ Ցեղասպանութիւնը նանչցող պետութիւններու թիւը 22 էր, այսօրուայ դրուածքով բարձրացած է աւելի քան 25ի: Նախանշաններ կան, որ մօտիկ գալիքին աւելի բարձրանայ քանակը:

Բայց այս բոլորի հետ եւ այս բոլորէն վեր կայ հիմնականը. այդ՝ արդի թուրքիոյ ներքին նախարարի վրայ, առաջատար մտաւորականութեան գարթումն է իրենց, որպէս թէ «ժողովրդավար» երկրին մէջ տիրող սուտի, ուրացումի, կեղծիքի ու անիրաւութեան 95 տարուայ թմբիւրէն: Այդ ժամանակաշրջանի ամբողջ տեսողութեան, անոնք գրկուած մնացած էին իրենց երկրի մօտաւոր անցեալին տեղի ունեցած պատմական իրադարձութիւններէն: Ծանօթ չէին 1909 թուականներէն սկսեալ մինչեւ 1915, եւ այս թուականէն մինչեւ մինչեւ 1922, իրենց երկրին մէջ տեղի ունեցած պատմական իրադարձութիւններէն: Լսած անգամ չէին, թէ իրենց երկրի մօտաւոր անցեալին անսովոր վայրագութեամբ, մարդկային երեսակայութեան վեր հրէշագործութիւններով, անասնական կիրք ու կատաղութեամբ, իր նախնիքացը չունեցող կանխամտածուած եղեռնագործութիւններ գործադրուած էին, որոնք կոչուած էին բնաջնջելու իր բռնագրաւուած բնօրրան՝ հայրենիքի մէջ ապրող հայ խաղաղ ազգաբնակչութիւնը, թող որ դոյզն յիշատակութիւն մ'անգամ չէր ձգուած թուրքիոյ պատմութեան գիրքերուն, դատաւարներուն ու զեկուցագրերուն մէջ:

Տակաւ կը բազմանան շարքերը Պոլսոյ Ակօս բերքի նահատակ Հրանդ Տիկնի շունչով տոգորուած արդարամիտ եւ խիզախ թուրք մտաւորականներուն, որոնք դատապարտու մը կը պահանջեն իրենց երկրի մօտաւոր անցեալին

հայոց դէմ տեղի ունեցած Ցեղասպանութեան դէպքերուն, որոնց գոհ գացած էին աւելի քան մէկ միլիոն հայ: Անոնք կը դատապարտեն իրենց կառավարութիւնը, որ այսօր ինիսունը հինգ տարիներ ի վեր կը խաբէին միջազգային հանրային կարծիքը: Կեղծիքի, սուտի եւ ուրացումի փառակապուածութիւն կը վառէ՝ տգիտութեան մէջ պահելով բարձրացող իրենց նոր սերունդները: Կուրանային իրենց նախորդներ՝ իրքիհատակաւորներուն ուրացող արարքները: Տէր կը կանգնէին անոնց ու կը պաշտպանէին գաւնոնք:

Թուրք բարձրամակարդակ այդ բոլոր մտաւորականները, ըլլան անոնք գրող, գիտնական, պատմաբան, ֆաղափապետ, փաստաբան, պետական երեսփոխան, համալսարաններու դասախօս, շարժանկարի աստղ եւ ուրիշ շատ ու շատեր, կը պատգամեն իրենց իշխանութիւններուն, նաեւ, նանչնալ իրենց նախորդներուն՝ հայոց դէմ գործած աշխարհով մէկ ծանօթ 1915-ի Ցեղասպանութիւնը: Անոնք կը պահանջեն ներողութիւն խնդրել հայերէն՝ իրենց նախորդներուն գործած յանցագործութիւններուն համար: Տապալել Իթքի-հատի պարագլուխներէն Վարչապետ Թալաթ Փաշայի արձանը, նաեւ, փողոցներու վրայէն ջնջել իթքիհատակաւոր պարագլուխներու անունները:

Իսկ, պետութեան վարիչներու կողմէ ստեղծուած Սուտի, կեղծիքի եւ ուրացումի մթնոլորտի մէջ խաբուած ըլլալու դատարարները կ'ապրի այսօր թուրք մտաւորականութիւնը, որ մոռցած ամէն վտանգ, իր տեղական Նիւրեմպերկը հաստատելու աշխատանքին լծուած կը թուի ըլլալ: Թուրք իշխանութիւնները գիտակցաբար կամ անգիտակցաբար (որքան բարեմիտ պէտք է ըլլանք հաւատալու համար երկրորդ վարկածին) կը դաւանին թէ յերիւրանք է հայոց կողմէ Օսմանեան Կայսրութիւնը ցեղասպանութեամբ մեղադրելու իրողութիւնը: Ցեղասպանութիւնը նանչցող երկիրներ հայկական սփիւռքայալիներու գոհեք են: Աղէկ: Բայց ինչ պատասխան պիտի տան անոնք իրենց թուրք մտաւորականութեան հրապարակային մեղադրանքներուն, բացայայտուած պատմական անցքերուն, ուրացումներուն եւ հայոց դէմ իրագործուած Ցեղասպանութեան մասին...

Թուրքիա, արդեօ՞ք կը գտնուի Նիւրեմպերկի նախասեմին...

### ՍԱՐԳՍԵԱՆԸ ՇՈՒՏՈՎ ՍԿՈՒՏԵՐԻ ՎՐԱՅ ԱՏՐՊԵՅՅԱՆԻՆ Ե ՅԱՆՁՆԵԼՈՒ ԻՆՏԵՆՏԻՎ ՇՐՋԱՆՆԵՐԸ»

Շարունակում է 1-ին

դժգոհութեան ահազանցող վտանգի գիտակցումը, եւ երկրորդ՝ Ղարաբաղի խնդրի աղետալի հանգուցալուծման վերահաս իրողութիւնը»:

Հայ-թրքական յարաբերութեան կապակցութեամբ Լեւոն Տէր-Պետրոսեան ըսաւ, «Հակառակ թուացեալ հրատապութեան, ներկայ պահին անիմաստ ու աւելորդ է խօսել Հայ - թուրքական յարաբերութիւնների կարգաւորման մասին, քանի որ այն, ինչպէս 2008 թուականի Հոկտեմբերից ի վեր բազմիցս պնդել ենք, կախուած է բացառապէս Ղարաբաղի խնդրի լուծումից կամ, աւելի ճիշդ, Ղարաբաղեան կարգաւորման գործընթացում էական տեղաշարժի արձանագրումից: Իսկ էական տեղաշարժ հասկացութեան տակ, Մինսկի խմբի համախաղաղահանգի միջեւ գոյացած կոնսենսուսի համաձայն, այսօր հասկացուած է ոչ այլ ինչ, եթէ ոչ հինգ շրջանների անմիջական վերադարձը Ատրպէյճանին, անորոշ թողնելով ապագայում լուծուելիք մնացեալ սկզբունքային հարցերը, ինչպիսիք են, մասնաւորապէս, խաղաղապահ ուժերի կամ դիտորդների տեղակայումը, Լաչինի միջանցքի ռեժիմը եւ Ղարաբաղի վերջնական կարգավիճակը»:

Մանրամասնելով առաջին նախագահը ըսաւ, «Այսինքն, հայկական կողմը կատարում է միանգամայն շօշափելի, կարելի է ասել, նիւթական գիշում, դրա դիմաց ստանալով միայն դատարկ ու չերաշխաւորուած խոստումներ, եթէ, իհարկէ, հաշուի չառնենք հաղորդակցութեան ուղիների մասնակի ապաշրջանակումը եւ հայ - թուրքական սահմանի բացումը»:

«Սերժ Սարգսեանը, հետեւաբար, կանգնած է դժուարին, եթէ ոչ ճակատագրական երկընտրանքի առջեւ, այն է՝ կա՞մ ստորագրել առաջարկուած համաձայնագիրը, դրանով յարուցելով սեփական ժողովրդի ցասումը, կա՞մ՝ ժամանակ շահելու համար մերժել այն՝ դրանով էլ զրգուելով միջազգային հանրութեանը», - յայտարարեց Տէր-Պետրոսեան:

«Իրավիճակի փարատոքան այն է, որ երկու դէպքում էլ նա, անկասկած, իշխանութիւնը կորցնելու է. ստորագրելու պարագայում նրան տապալելու են ներքին ուժերը, այդ թւում նախկին ու ներկայ կողմիցիւն գործընկերները»:

ըր, իսկ մերժելու պարագայում՝ միջազգային հանրութիւնը, նրա վերաբերեալ կուտակած առատ քրոմփրոմատները օգտագործմամբ, սկսած կեղծուած ընտրութիւններից ու խոցելի լեզուաբանութիւններից, աւարտած Հոկտեմբերի 27-ի ու Մարտի 1-ի սպանդներով, քաղաքական հալածանքներով, անձնական կողուպցիւրով եւ անվայել հոպիներով»:

«Թէեւ այլընտրանքների արդիւնքը նոյնն է լինելու, այսինքն՝ իշխանութեան անխուսափելի կորուստը», սակայն, ըստ նախկին նախագահի, «Սերժ Սարգսեանն ընտրելու է ոչ թէ մերժման, այլ ստորագրման տարբերակը եւ շուտով, կամայ թէ ակամայ, սկուտեղի վրայ Ատրպէյճանին է յանձնելու Մինսկի խմբի համախաղաղահանգի կողմից գրեթէ վերջնագրի ձեւով պահանջուած հինգ շրջանները»:

- «Որովհետեւ այդ դէպքում նա կարող է ստանալ լինել, որ միջազգային հանրութիւնից կը ստանայ եթէ ոչ իշխանութիւնը պահպանելու, ապա առնուազն անձնական անձեռնմխելիութեան եւ ունեցուածք վայելելու երաշխիքներ, ընդհուպ մինչեւ Նոպեմբերի մրցանակի շնորհումը եւ քաղաքական ապաստանի տրամադրումը, ինչը բացառուած է հակառակ պարագայում»:

Անդրադառնալով մամուլի հրապարակումներուն, «որոնց համաձայն՝ Ռոբերտ Քոչարեանը, Փարիզի մէջ կայացած հանդիպման ժամանակ, Սերժ Սարգսեանէն պահանջած է իրեն վարչապետ նշանակել, իսկ այնուհետեւ հրաժարական տալ եւ այդպիսով հարթել նախագահի պիտոսի վերաբացման իր ճանապարհը, առաջին նախագահը ըսաւ. - «Այդ ծրագրին, ըստ երեւոյթին, (նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանից բացի) անմասն չեն նաեւ Դաշնակցութիւնը, «Բարգաւաճ Հայաստան»-ը եւ Ազգային ժողովի նախագահը՝ իր շրջապատով»:

Այսուհանդերձ, ըստ Տէր-Պետրոսեանի, «Քոչարեանի երազանքը դատապարտուած է անկատար մնալու, որովհետեւ նախ՝ Սերժ Սարգսեանը նրան երբեք կամովին վարչապետ չի նշանակի, եւ երկրորդ՝ եթէ հանգամանքների պարտադրանքով ստիպուած էլ լինի նշանակել, միջազգային հանրութիւնը դա չի հանդուրժի, եւ մինչեւ ամենաերիտասարդ թոշակառու վարչապետից նախագահ դառնայ, կը կանգնի Հասակայի դատարանի առջեւ»:

### ՇՈՒՇԻ ՊԱՐԱԽՈՒՄԻ ԱՅՅԸ

Շարունակում է 8-ին

ակումբին: Ապա, Յուլիս 8-ին Դամասկոսի Օփերայի մէջ, Յուլիս 10-ին Լաթիպի Փերթին մէջ եւ Յուլիս 16-ին Պէյրութի Էմիլ Լահուտ համալիրին մէջ: Վերջին երեք ելուցները կազմակերպութեամբ ՀԲԸՄ-ՀԵԸ-ի տեղական վարչութեանց:

Անդամներու մեծամասնութեան ծնողները գաղթած են Սուրիայէն,

Լիբանանէն եւ այլուր: Անոնք մեծ հաճոյքով, ոմանք առաջին անգամ ըլլալով պիտի այցելէին իրենց ծնողաց ծննդավայրը եւ անկասկած չուզումի եւ ուրախութեան օրեր պիտի ապրին իրենց ընտանիքին ու հարազատներուն հետ:

Կը հրաւիրենք ողջ հայութիւնը վայելելու Նիւ Եորքի Շուշի Պարախումբը եւ քաջալերելու օտար ամերու վրայ Հայու հոգիով մեծցած հայրերին երու արուեստը:

### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՍԱՂՈԱՆՔ

Ընկ. ԳԱԼՈՒՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ ենթարկուած է յաջող գործողութեան մը: Ան այժմ կը բոլորէ իր կազդուրման շրջանը: Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք իրեն:

«Մասիս»

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91107  
**Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:**  
**Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝**  
**(626) 398-0506**

**ԱՊԱՔԻՆՄԱՆ ՍԱՂՈԱՆՔ**  
Ընկ. ԳԱԼՈՒՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ ենթարկուած է յաջող գործողութեան մը: Ան այժմ կը բոլորէ իր կազդուրման շրջանը: Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք իրեն:



### «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԽՍԲԱԲՈՐՈՒՄԸ»

Շարունակում է 13-էն

Հսկայ աշխատանքին մէջ կլանուած էին, իրենք եւ իրենց նուիրեալ թարգմանիչ աշակերտները: Այդ բոլորին մէջ, անցնելով անվերջ դժուարութիւններէ, ինչպէ՞ս մտածեցին եւ գործադրեցին նաեւ շարականներ գրելու եւ անոնց եղանակները յորինելու անհրաժեշտութիւնը: Հերոսական գործ, հերոսական նուիրում Հայաստանեայց Եկեղեցւոյ հաշտոյն:

Անմիջապէս ըսեմ որ անպայման հոգեւոր երգը իր բանաւոր ձեւին մէջ, անգիր եւ սակայն եղանակաւոր, գոյութիւն ունեցած էր չորրորդ դարու ամբողջ տեւողութեան, երբ Հայ Եկեղեցին 301 թուականէն մինչեւ 406 գիրերու գիւտը, հարիւր լման տարիներ կազմակերպուած եկեղեցին էր Հայաստան աշխարհի: Հետեւեալ բարձր երգեր եւ ինչպէս երգեցին մեր նախնիք ու գործօն պահեցին Հայ Եկեղեցւոյ պաշտամունքը այդ հարիւրամեայ ժամանակահատուածին մէջ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ Ս. Սահակ Պարթեւ, Ս. Գրիգորի որդիներն ու թոռները՝ Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ եւ Մեծն Ներսէս Հայրապետները կենդանի պահեցին Հայ Քրիստոնէութիւնը: Անոնք անպայման հոգեւոր երգեր հիւսնեցին բանաւոր լեզուով, գրաբարի խօսակցական լեզուի ուժով, եւ ոչ թէ գրաւոր աւանդով որ տակաւին գոյութիւն չունէր: Բանաւորը հասաւ գրաւորին որպէս ատարկ:

Պրն. Փանոյեան հաստատած է մէջընդմէջ թէ երգը երաժշտութիւն կը պահանջէ, եւ երաժշտութիւնն ալ՝ իր ենթահողը կը պահանջէ, որ է գրաւոր բանահիւստութիւնը, որուն վրայ կարելի պիտի ըլլար ձեւաւորել եղանակը: Որովհետեւ առանց գրաւոր բնագրին երգը պիտի մնար անվաւեր եւ միայն յիշողութեամբ եւ քմահաճոյքով զարդարուն կարճատեւ երգ մը պիտի ըլլար:

Մեր առաջին Սուրբերը նախ գրեցին եւ ապա երգեցին, բիւրեղացնելով անցեալի խօսակցական գրաբար լեզուն եւ անով երգուած նախնական երգը: Հայ Եկեղեցւոյ Շարականներու եղանակները միայն գրաբար լեզուին ու անոր գրաւոր բնագրին վրայ յորինուեցան, եւ այդ պատճառով ալ զանոնք գրաբար լեզուէն տարբեր լեզուներով երգել, նոյնիսկ աշխարհաբարով, պիտի նշանակէր պարզապէս «չերգել»: Մեր հին ոսկեղնիկ լեզուն երբ գիրի վերածուեցաւ, այն ատեն միայն եղանակը «լեզու ելաւ» եւ որպէս երաժշտութիւն յորինուեցաւ անոր վրայ:

Ի գուր այսօր եւ վաղը կամ որեւէ ատեն երբ մեր շարականներուն եղանակը ուզենք երգել մեր հասկցած լեզուներով, շարականը իսկոյն աղմկալարոյց «ծնծղալի» մը վերածած կ'ըլլանք: Անկարելի է եւ ապարդիւն: Շարականը գրաբար լեզուով միայն կարելի է երգել Հայ Եկեղեցւոյ մէջ: Ութը ձայները ձեւուած ու չափուած են միայն գրաբար լեզուին վրայ:

Գիրքիս վաստակաւոր հեղինակը հեղինակաւոր երաժիշտներէ քաղելով իր տեղեկութիւնները, մեզի նը փոխանցէ ա՛յն ինչ որ դարձեալ անհաւատալի է: Այդ ութ ձայներու յորինումն ու գոր-

ծադրութիւնն է ամենավաղ ժամանակներէն՝ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպեան առաջին դարոցներէն սկսեալ: Երեւակայել որ այդ Սուրբերն ու թարգմանիչ Վարդապետները ժամանակ պիտի յատկացնէին նաեւ ութ ձայներու համակարգի պատրաստութեան գործին, որպէսզի անմիջական սերունդը չզրկուէր կանոնական եղանակով երգելու իրենց իսկ գրած շարականները: Հրաշքի համագոր նախաձեռնութիւն մըն ալ այս մէկը:

Վաւերական Շարականագիրներէն յայտնի են նաեւ Մովսէս Խորենացի պատմահայրը, Յովհաննէս Մանդակունի Հայրապետը, Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսը, եւ Անանիա Շիրակացի վարդապետը: 7-րդ դարուն էր որ «ձոնընտիր» կոչուած կանոնական շարականները հաւաքուեցան Բարսեղ ձոն անուն երաժշտագետին կողմէ, եւ դար մը ետք ժամերգութեան երգացանկի առնչութեամբ շարականները կանոնի վերածեց Ստեփաննոս Սիւնեցի աստուածաբան Վարդապետը:

Վստահաբար բոլորին մէջ Ներսէս Շնորհալի Հայրապետ որպէս թագ եւ պարծանք հանդէս եկած է բիւրեղեայ գրաբար լեզուով գրած ու մշակած բազմաթիւ շարականներով, որոնց ինք տուած է երաժշտութիւն եւ եղանակ: Մեր Շարակնոցին մեծագոյն մասը, թիւով եւ մանաւանդ որակով, կը պարտինք Շնորհալիին: Այդ մասին առանձին ուսումնասիրութիւն մը կատարեցի վերջերս որ լոյս տեսաւ շրջանիս շաբաթերթերուն մէջ:

Խաղաղութեան շրջանի մասին խօսելով Գէորգ Սրկ. Փանոյեան դարձեալ կը ստուգէ թէ նոյն Ստեփաննոս Սիւնեցին էր որ 8-րդ դարուն խաղաղութեան դաշնաւորեց ութ ձայներու եղանակները, որոնք հիմքը կազմեցին «հայկական ձայնագրութեան»: Խաղաղութեան արժէքը յորինուած եղանակին վրայ բառերու շեշտաւորումն էր եւ վանկերու եղանակաւորումը:

Փանոյեան մեզի կը հաղորդէ նաեւ որ յետագային խաղաղութիւնը զարգացաւ յատկապէս Կիլիկեան Հայաստանի մէջ, մինչեւ որ 18-րդ դարուն Կ. Պոլսոյ մէջ «հայկական ձայնագրութիւնը» իր տեղը գտաւ շնորհիւ Պապա Համբարձում Լիմոնձեանին, որ, ինչպէս Փանոյեան կը հաստատէ, «հմուտ գիտուի էր հայ եւ յոյն եկեղեցական երաժշտութեան, օգտագործելով հին խաղերու միջանի հատը, եւ տարիներու աշխատանքէ ետք 1813 թուին հանրութեան ներկայացուց իր ստեղծած հայկական ձայնագրութեան համակարգը»:

Լիմոնձեանի գործը շարունակուեցաւ յետագային Եղիա Տնտեսեանի կողմէ որ 1869-ին ձեռնարկեց ամբողջ Շարակնոցը հայկական ձայնագրութեամբ գրի առնելու գործին, ու աւարտեց 1871 թուին:

Պրն. Փանոյեան կազմակերպեալ ճիգ թափած է համառօտ եւ սակայն ամբողջական կերպով ութ ձայներու եւ անոնցմէ ոմանց դարձուած քննրու յատուկ եւրոպական ձայնանիշները գրի առնելու համար: Այդ բաժինը իսկական բանալին կը հանդիսանայ մեր շարականներուն: Միայն երկու ձայները դարձուածք չունին՝ ԲԿ եւ ԳԿ

### ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹԱԼԱՆՈՂՆԵՐԸ-4

Շարունակում է 6-էն

ներկրման շուկայում: Բաղդասարովը որոշեց իր ուշադրութիւնը կենտրոնացնել այլ ոլորտների վրայ եւ մասնակցեց Հրազդանի ցեմենտի գործարանի «սեփականաշնորհում»-ին: Գործարանի սեփականաշնորհումն զինը կազմում էր մօտ 150 հազար տոլար, երբ այդ ժամանակ Երեւանի կենտրոնում 3 սենեականոց բնակարանը նոյնքան արժէր: Նրա հետ մէկտեղ գործարանի սեփականատէր դարձաւ եւս մի հոգի, ով յետագայում սպանուեց՝ իր դէմ իրականացուած մահափորձի հետեւանքով: Պետպատվեր իրականացնող բոլոր շինընկերութիւններին պարտադրուած էր ցեմենտ գնել միայն Հրազդանի գործարանից: Բաղդասարովի միւս «սխրանքը» «Հայկական լեզու» «սեփականաշնորհումն» էր, որը նա գնեց 300 հազ. տոլարով, ինչը, իրականում,

ձայները: Միւս վեցը օժտուած են իւրաքանչիւր դարձուածք եղանակով:

Գարձուած քները յաւելեալ երաժշտական կառուցուածք ունին ու զարդարուն, զգացական, եւ վերացական դեր կը կատարեն շարական երգելու արուեստին մէջ: Արուեստ ըսի, որովհետեւ այդ նոյն դարձուածքները դիւրաւ կրնան փորձանքի մէջ ձգել երգողը, ու տանիլ սահմաններէ անդին եւ վիրաւորել շարականի իսկական եղանակը: Բարձր եւ ոլորապատկաւ նօթերու նկարագիր ունին այդ վեց ձայներու դարձուածքները: Զանոնք ուղիղ երգել, հետեւելով ձայնի ամէն մէկ նօթին, հրաշալի եւ սքանչելի ոլորտներու կ'առաջնորդէ ունկնդիրը: Սակայն սահմանէն դուրս քմահաճօրէն չհագործել այդ նոյն նօթերը՝ կ'աղարտէ ամէն ինչ: Գիտնալու ենք որ շարականները անձնական երգեր չեն, այլ պաշտամունքի, հասարակաց, կանոնական հոգեւոր երգեր են, որոնք կը պատկանին ինչ եկեղեցիին որպէս ամբողջութիւն:

Փանոյեան կարգաւ նօթագրել տուած է ամէն շարականի սկզբնաւորութիւնը, թէ՛ բուն ձայնին եւ թէ՛ դարձուածքին յատուկ: Այդ էջերը լաւ կ'ըլլայ արտատպել եւ տրամադրել մեր երգեցողներուն որպէսզի ուղիղ սկսին շարականի ձայնը ու շարունակեն ըստ այնմ եւ ուղիղ վերջացնեն գայն: Երբ շարական մը պիտի սկսինք երգել, սկսուածքը եթէ եւրոպական նօթերով սկսինք, արդէն դժուարութիւն չենք ունենար: Եւ սակայն յաճախ Շարակնոցէն կարդալով կը ջանանք երգել զանոնք, հետեւելով խաղերուն:

Սակայն թելադրելի է որ ամէն ձայն յիշողութեամբ մեր մտքին մէջ շարականի մը օրինակով բացուի, նոյնիսկ սկսելէն առաջ: Որովհետեւ կան ձայնեղանակներ, ինչպէս ԱԿ եւ ԲԿ ձայները մէկ կողմէն, ԱԶ դարձուածքը եւ բուն ԴԿ ձայնը միւս կողմէն, որոնք շատ նման են իրարու եւ կրնան շփոթութիւն ստեղծել: ԱԿ ձայնը միշտ գոհը կրնայ կ'երթալ ԲԿ ձայնին, եւ ասոր բանալին իւրաքանչիւրին վերջաւորութեամբ կը հաստատուի: Կը սկսինք ԱԿ-ով եւ անմիջապէս ԲԿ-ի կը վերածուի շարականը, ու ԲԿ-ով ալ կը վերջանայ, ինչ որ սխալ է: ԱԿ ձայնի դարձուածքը յա-

եղել է պանքի Երեւանի մի քանի գրասենեակների արժէքը: Այն հետագայում վաճառուեց «ՎՏԲ» պանքին: Եւ այդ ամէնը նա կրկին արեց Սարգսեանի ու Քոչարեանի աջակցութեամբ: Նախաձեռնութեամբ իրականացնելու եւ առաջին հերթին աւիակերոսինի վրայ ամբողջական մենաշնորհ սահմանելու միջոցով նպատակաւորուած կերպով անանկացման է հասցուել պետական «Հայկական աւիաուղիներ» աւիաընկերութիւնը, որը մինչեւ 2000-ը ինքնաբաւ եւ եկամտաբեր ընկերութիւն էր: Հետագայում աւիաընկերութիւնը բաժանուել է 3 մասի, սակայն աստիճանաբար մինչեւ 2004-ը բոլոր աւիափոխադրողները Բաղդասարովի «Արմաւիայի» կողմից դուրս են մղուել շուկայից: Ակտիւների ենթադրուող չափը 1 միլիարդ տոլար է:

(Շարունակելի)

ճախակի է մեր շարականներուն մէջ եւ շատ հաճելի: Փանոյեան ճիշդ կողմորոշուած է Եղիա Տնտեսեանի կարծիքին համաձայն չըլլալով, թէ ըստ Տնտեսեանի ԱԿ ձայնի մեր գիտցած դարձուածքը բուն ձայնը եղած է, եւ փոխադարձաբար: Սակայն, ԱԿ-ը ունի իր իւրաքանչիւր սկզբնաւորութիւնն ու վերջաւորութիւնը, իսկ անոր դարձուածքը եւս ունի իր իւրաքանչիւր սկզբնաւորութիւնն ու վերջաւորութիւնը:

Կայ նաեւ ԴԿ եղանակի դարձուածքի պարագան: Այս դասակարգին կը պատկանին մեզի ծանօթ «Անձինք նուիրեալք»ը եւ «Նորահրաշ պատկերներ»ը, որոնք հարագատ եղբայրներ են, այնքան հրաշալի եղանակաւորումով: Նոյն ձայնին դարձուածքը ունի նաեւ երկու խորթ եղբայրներ, որուն տրուած է մէկուն ԴԿ դարձուածք եւ միւսին ԳԶ եղանակը: Երկուքն ալ կ'երգուին յար եւ նման: Անոնք են 72 Աշակերտաց կանոնի ողորմեան՝ «Հայր առաքող Միածնիդ», եւ միւսը՝ Յակոբայ Մծբնայ Հայրապետի կանոնի ողորմեան՝ «Երկրպագեմք առաջի»: Առաջինը կը սկսի ԱԿ դարձուածքով ու կ'աւարտի ԳԶ եղանակով, մինչդեռ երկրորդը՝ լրիւ ԳԶ եղանակով, հակառակ անոր որ երկուքն ալ յար եւ նման եղանակներ են:

Այս մասին ուրախ եմ ըսելու որ երաժշտագէտ Գրիգոր Փիտէճեան հինգ տարի առաջ հրատարակեց «Անձինք նուիրեալք» շարականին նուիրուած շահեկան գիրք մը ուր այս չորս շարականները քննական բաղդատութեան ենթարկած է: Արժանի է Փիտէճեանի այդ հատորը աւելցնել Փանոյեանի մատենագիտական ցանկին վրայ ու ակնարկ մըն ալ աւելցնել «Հայր առաքող Միածնի» եւ «Երկրպագեմք առաջի» ողորմեա շարականներուն վրայ:

Գնահատանք ու պատիւ Բրշ. Գէորգ Սրկ. Փանոյեանին, որուն հետ իմ ծանօթութիւնը կ'երթայ ուղիղ 65 տարիներ առաջ, երբ որպէս պատանի ակնաստես եղայ իր կիսասարկաւազ ձեռնադրութեան, եւ ապա որպէս երկարամեայ ծառայողը Ս. Սեղանին եւ արթնամիտ դիւանապետը Եգիպտոսի Հայոց Առաջնորդարանին Հոգեւոր Մամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեանի առաջնորդութեան երկարատեւ շրջանին:



### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԱԾ ՈՒ ՉՄԵԿՆԱԲԱՆՈՒԱԾ ԶԱՐՑԵՐ

Շարունակում է 8-էն

իրողութեան, երբ այս երկուքը սահմանային ոչ մէկ կապ ունին իրարու հետ: Մենք, այս հարցին մէջ, շատ հեռու ենք քեմալական թուրքիան եւ խորհրդային վարիչները պաշտպանելու մտադրութենէն: Քաւլիցի: Սակայն պատմական ճշմարտութիւնները գերադաս կը սեպենք քաղաքական համոզումներէն: Ուստի, առիթը յարմար կը գտնենք անդրադառնալու նաեւ այս հարցին:

Նախիջեւանը որպէս ինքնավար Հանրապետութիւն Ատրպէյճանի հովանաւորութեան տակ դնելու հարցին մեկնաբանութիւնը, մեր կարծիքով, պէտք է սկսիլ այն պահէն, երբ յառաջ կու գայ Նախիջեւանը որպէս Հայաստանէն անջատ վարչատարածքային միաւոր ընդունելու հասկացութիւնը: Այս տեսակէտը առաջին անգամ հրատարակ կը նետէ ամերիկացի գոր. Հասկէլը, երբ ան՝ որպէս Միջազգային Հաշտութեան Վեհաժողովին կողմէ կազմուած Հինգերորդ Խորհուրդի անդամ, տարածաշրջանի միջ-պետական քարտէսը ճշգրտելու առաքելութեամբ 1919 Օգոստոսին կը հասնի շրջան: Զօր. Հասկէլի առաջարկով, Նախիջեւանը պիտի հռչակուէր «չէզոք շրջան», իր կողմէ նշանակուած օտարազգի նահանգապետի մը ղեկավարութեան տակ (18): Բնականաբար, գօր. Հասկէլի այս առաջարկը Հայաստանի Հանրապետութեան վարիչները դժգոհ կը ձգէ:

Հայաստանի Հանրապետութեան եւ քեմալական թուրքիոյ միջեւ կնքուած Ալեքսանտրապոլի պայմանագրին մէջ (2 Դեկտեմբեր 1920), Նախիջեւանը Հայաստանէն անջատ եւ թուրքիոյ հովանաւորութեան տակ վարչատարածքային շրջան մը պահելու գաղափարը կ'ամրապնդուի: Պայմանագրի երկրորդ յօդուածին մէջ կ'ըսուի. «Նախիջեւան-Շահխա-Շարուր շրջանին մէջ յետագային ընդհանուր քուէով որոշուելիք վարչական ձեւին եւ այս վարչաձեւին ընդգրկելիք հողին Հայաստան պիտի չմիջամտէ եւ այդ շրջանը հիմակուհիմա թուրքիոյ հովանաւորութեան ներքեւ տեղական վարչութիւն մը պիտի հաստատուի» (19): Բաւական նուրբ հարց է վստահօրէն ըսել թէ Ալեքսանտրապոլի դաշնագրով յառաջ եկած Նախիջեւանը թուրքիոյ հետ սահման ունէ՞ր թէ ոչ: Փրոֆ. Յակոբ Փափագեան կը պնդէ թէ այո՛, ունէ՛ր (20). որովհետեւ 1828-ի ռուս-պարսկական թուրքմենչալի պայմանագրով, Պարսկաստանի հիւսիս-արեւելեան սահմանը կ'երկարէր մինչեւ Քարա Սու գետակը. Քարա Սուի եւ Արաքսի հնահունին միջեւ ինկած տարածութիւնը մաս կը կազմէր Սուրմալու գաւառին. թուրքիոյ կողմէ Սուրմալուի բռնակցումէն ետք, այդ տարածքը եւս կ'անցնի թուրքիոյ, որ կը ստեղծ է ցամաքային կապը Նախիջեւանի հետ: Փրոֆեսորներ ճոն Կիրակոսեան եւ Ռուբէն Սահակեան իրենց «Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում» պատկառելի աշխատութեան մէջ, Ալեքսանտրապոլի դաշնագրի երկրորդ կէտը կը ներկայացնեն այնպիսի կրճատումներով, կախման կէտերով եւ յապաւումներով որ կը

ստացուի թէ Հայաստան-թուրքիա սահմանը կը սկսի ու կը վերջանայ Քարա Սուի Արաքսի մէջ թափուող միեւնոյն կէտին վրայ (21): Ալեքսանտրապոլի դաշնագրի կնքման ժամանակ Հայաստանի վարչապետ Սիմոն Վրացեան, Ալեքսանտրապոլի դաշնագիրը ընդհանրապէս, եւ անոր Նախիջեւանի վերաբերող բաժինը կու տայ բոլորովին այլ հերթականութեամբ եւ շարադրանքով, էջատակին աւելցնելով թէ «պայմանները գրի են առնուած Ա. Խատիսեանի կողմից» (22): Միւս կողմէ սակայն, Ալեքսանտրապոլի դաշնագրին հայկական պատուիրակութեան նախագահ Ալեքսանտրապոլ Խատիսեան կը նշէ, թէ »Դաշնագրի իսկական բովանդակութիւնը թուրքերը չհրատարակեցին: Բայց ես այժմ եւեթ պէտք է ըսեմ, որ ամենամօտ (գրեթէ բառացի) բովանդակութիւնը հրատարակուած է Ա. Պուտեպարի "Les Traites Diplomatiques de L'Armenie" ժողովածուի մէջ, իմ խօսքերու եւ յիշողութիւններու հիման վրայ (23):

Շաւարշ Թորիկեան կու տայ Ալեքսանտրապոլի դաշնագրին օսմաներէն բնագրին հայերէն թարգմանութիւնը, որուն երկրորդ կէտին մէջ կը ճշգրտուին Նախիջեւանի սահմանները: Հոն կը նշուին տեղանուններ, որոնք գործածութենէ դադարած են այսօր, իսկ լեռնագագաթները կը նշուին թուանշաններով (24): Այնպէս որ պարզ ընթացքով հնարաւոր է եզրակացնել թէ այդ դաշնագրով թուրքիայի հովանաւորութեան տակ դրուած Նախիջեւանը սահման ունէ՞ր անոր հետ: Ասոր համար հարկաւոր է ունենալ դաշնագրի ստորագրման պահուն օգտագործուած քարտէսը՝ համապատասխան նշումներով:

Մոսկուայի պայմանագրով, ուր արդէն յստակ կ'երեւայ թուրքիա-Նախիջեւան սահմանը, Նախիջեւան դուրս կու գայ թուրքիոյ հովանաւորութենէն եւ կը դրուի Ատրպէյճանի հովանաւորութեան տակ: Տարակոյս չկայ, որ խորհրդային վարիչները, երկրի ներքին սահմանները ճշգրտելու ժամանակ կը հետապնդէին հեռագնայ ռազմավարական նպատակներ: Սակայն այդ նպատակները, ինչպէս միշտ եւ ամենուրեք, երկրորդական նշանակութիւն ունէին երկրի արտաքին սահմաններուն ընդլայնման հետ համեմատած: Այս պարագային, առաջնայինը Նախիջեւանը Խորհրդային Միութեան սահմանները մէջ ընդգրկելն էր: Եւ որպէսզի այս գաղափարը աւելի դիւրին ընդունելի ըլլայ թուրքերուն կողմէ, Նախիջեւանը ոչ թէ կը կցուի Հայաստանին, այլ կը դրուի Ատրպէյճանի ինքնավարութեան տակ: Այս տրամաբանութեան թելադրութեամբ ալ կարելի է մեկնաբանել Նախիջեւանին վերաբերող յօդուածին յաջորդ պարբերութիւնը ուր կ'ըսուի. «Պայմանով, որ Ատրպէյճանը սոյն ինքնավարութիւնը չի զիջի երրորդ պետութեան»: Չենք խորհիւր որ խորհրդայինները մտահոգուէին թէ օր մը Ատրպէյճան Նախիջեւանը կը վերադարձնէ Հայաստանին: Անոնց մտահոգութիւնը կ'երթար հոն, որ Ատրպէյճան Նախիջեւանը չվերադարձնէ թուրքիոյ: Արդէն վերջիջեալ մէջբերումին մէջ «պետութիւն» բառը (եւ ոչ թէ հանրապետութիւն), այս ենթադրութիւնը

ամրապնդող ազդակ մըն է:

Կարսի պայմանագիրը Նախիջեւանի ճակատագրին մէջ նորութիւն մը չի բերեր:

Այսօր, եթէ պատմական հեռաւորութենէ մը անհրաժեշտութիւնը կայ Նախիջեւանի Հայաստանէն իզման պատասխանատուները նշել, ապա ըստ հերթականութեան պէտք է թուարկել ամերիկացիները (որոնք առաջինը հրատարակ նետեցին Նախիջեւանի անջատ վարչատարածքային հասկացութիւնը), քեմալական թուրքերը (որոնք թուրքիոյ կցեցին Նախիջեւանը), Հայաստանի Հանրապետութեան վարիչները (որոնք չկրցան օգտագործել Ալեքսանտրապոլի պայմանագիրը ստորագրել խուսափելու պատմական առիթը եւ Նախիջեւանը թուրքիոյ հովանաւորութեան տակ դնելու գաղափարը ամրապնդեցին դիւանագիտութեան մէջ), խորհրդայինները (որոնք Նախիջեւանի վերստացումէն ետք գայն չմիացուցին Հայաստանին եւ դրին Ատրպէյճանի հովանաւորութեան տակ) եւ ազերիները ... (որոնք սիրայօժար ընդունեցին ընծայուած նուէրը):

Ժ. Յ. Յակոբեան կ'անդրադառնայ նաեւ Լեռնային Ղարաբաղի Հայաստանին հետ ցամաքային կապ ունենալու հարցին ու կը գտնէ թէ 1927-ի դրութեամբ ԼՂԻՄ-ը անջատուած չէր Հայաստանէն, այլ ցամաքային սահմանով կապ-

ուած էր անոր: Այստեղ յօդուածագիրը ամբողջապէս իրաւացի է: Կրնանք միայն աւելցնել որ 1923-ին Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի արանքին գոյութիւն կ'առնէ Քիւրտկա-րայը՝ Կարմիր Քիւրտիստան: Քիւրտկայը՝ միութենական հանրապետութիւն, ինքնավար հանրապետութիւն կամ ինքնավար մարզ մը չէր. այդ մշակութային ինքնավարութիւն՝ «ուեզդ» էր: 1929-ին (վերջին երկու թուականները վերստուգման կարիք ունին) Քիւրտկայը կը լուծարուի Ատրպէյճանի տարածքին մէջ, որուն պատճառով ԼՂԻՄ-ը իր ցամաքային սահմանը Հայաստանին հետ կը կորսնցնէ: Ի՞նչ տրամաբանութեամբ եւ ո՞ր որոշումով գոյութիւն առաւ Քիւրտկայը, ո՞ր որոշումով այն լուծարուեցաւ: Տարակոյս չկայ որ նման կարգի որոշումներ կ'առնուէին միայն Մոսկուայի մէջ: Արդեօ՞ք Ատրպէյճան այդքան ազդեցութիւն ունէր Համայնավար Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէին վրայ, որ նման կարգի »քեմալութեամբ« մը կրցաւ ԼՂԻՄ-ի ցամաքային կապը խզել Հայաստանէն: Դժբախտաբար, հայոց նորագոյն պատմութեան համար կարեւորութիւններ կայացնող այս հարցը տակաւին ամբողջապէս մեկնաբանուած չէ հայ պատմաբաններուն կողմէ:

Ու դեռ հայոց նորագոյն պատմութեան մէջ մեծ ու փոքր ինչքան հարցեր կան չմեկնաբանուած:

\*\*\*\*\*

#### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Ճ. Կիրակոսեան, «Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանին Առջեւ», Բ. Հ., Երեւան, 1983, էջ 312:
2. G. Bournoutian, "A History Of The Armenian People", Բ. Հ., Գալիֆորնիա, 1994, էջ 194 եւ "A Concise History Of The Armenian People" Գալիֆորնիա, 2002, էջ 312:
3. R.H. Hewsen, "ARMENIA-A Historical Atlas", Միխայլօ, 2001, էջ 266:
4. Մ. Ռիֆաադ Ալ Իմամ, «Ալփատիա Ալարմանիա Տի Ալտաուլա Ալօսմանիա, 1878-1923», Գահիրէ, 2002, էջ 153:
5. Է. Բեգիմանեան, «Անգարան Քաղաքային Գիտնական Կրօնական Բախումէ Քարոզում», «Վասն Հայութեան», 4 Փետրուար 2001, եւ «1932 թ. Իրան-Թուրքիա Պայմանագրի Գաղտնագրութեամբ Հակասումէ Ինչ Մահերին», «Մրջադարձ», Ապրիլ 2004:
6. Sh. Hunter, "The Transcaucasus In Transition: nation-Building and Conflict" 1994, էջ 13-14:
7. Ե. Ճերեմեան, «Փանքուրանիզմը», Պէյրուս, 1998, էջ 40-41:
8. Յ. Փափագեան, «Նախիջեւանի Հիմնադրութեան Մոսկուայի 1921 թ. Մարտ 16-ի Ռուս-Թրքական Պայմանագրում», «Գիտական Նիւթեր Եւ Յաւելուած», Երեւան, 2001, էջ 165-167:
9. A. Sanjian, "George A. Bournoutian, A History Of The Armenian People", «Հասկ-Հայագիտական Տարեգիրք», Անթիլիաս, 1995-96, էջ 514:
10. Ե. Ճերեմեան, «Թուրքիա-Նախիջեւան Սահմանը», «Արարատ Բացառիկ-Փանքուրանիզմը», 2003 Յունիս, եւ «Անգամ Մը Եւ Թուրքիա-Նախիջեւան Սահմանագրի Իմ Մասին...», «Կամար», 2008 թի 6:
11. «Պայմանագիր (1921 թուականի Մարտի 16-ի) Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ, Կարսի Պայմանագիր (1921 թուականի Հոկտեմբերի 13-ի)», Երեւան, 1991, էջ 20:
12. Ռ. Տէր Միմասեան, «Մարտի Նախիջեւան Եւ Թուրքիայի Քաղաքականութիւնը», «Իրօշակ», 1925 Սեպտեմբեր:
13. Զ. Մարտիկան, «Երեւն Դաշնագրի մասին», Պէյրուս, 1979, էջ 74:
14. Է. Բեգիմանեան, նշ. աշխ. ներքին:
15. Վ. Փափագեան, «Իմ Յուշերը», Գ. Հ. Պէյրուս, 1957, էջ 220:
16. FO 371/1/15356, E 5030/3720/34:
17. "The Geographical Journal", 1938 Յունուար, թի 1, էջ 58:
18. Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Փարիզ, 1928, էջ 276:
19. Մարտի Թորիկեան, «Հայկական Հարցը Եւ Միջազգային Օրէնքը», Պէյրուս, 1976, էջ 252:
20. Յ. Փափագեան, «Ինչպէս Գոյացաւ Թուրքիա-Նախիջեւան Տարբիրութեան Մասին Սահմանը», «Իրան Նամէ» 1995 թի 6-1996 թի 1 (թի 16-17):
21. Ճ. Կիրակոսեան եւ Ռ. Սահակեան, «Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան Եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում», Երեւան, 1972, էջ 684:
22. Ս. Վրացեան, նշ. աշխ. էջ 438:
23. Ա. Խատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան Ծագումն Ու Զարգացումը» Պէյրուս, 1968, էջ 309:
24. Մ. Թորիկեան, նշ. աշխ.:



### ՇՈՒՆԱՆՈՒԹԻՒՆ




ԳՐԻԳՈՐ ԳՈՒԶՈՒԵԱՆ

Հանգուց եալ ԳՐԻԳՈՐ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Ապրիլ 11, 2010ին Փասադենայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E Colorado Blvd., յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝ Այրին՝ Կիւլէն Գուգուեան Դուստրը՝ Հուրիկ Գուգուեան Դուստրը՝ Կարօ եւ Սիլվա Մարլեան եւ զաւակները Տղան՝ Յակոբ եւ Նայիրի Գուգուեան եւ զաւակները Դուստրը՝ Վազգէն եւ Սեդա Խոտանեան եւ զաւակը Քոյրը՝ Ալիս Յարութիւնեան եւ զաւակները Եղբօր տիկինը՝ Մարիթան Գուգուեան եւ զաւակները Եւ համայն Գուգուեան, Ղազարեան, Յարութիւնեան, Այն Մալլըք, Մարլեան, Խոտանեան, Մուրատեան ընտանիքներ եւ հարազատներ: Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի ՀԿԲՄ Կեդրոնի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 N Allen Ave. Pasadena:

### ՄԱՐԱԶԴ



ԳԷՈՐԳ (ԺՈՐԺ) ՊԵՏՐՈՍ ԲԱԳԱՏՈՒՐԵԱՆ 1930-2010

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր հարազատին ԳԷՈՐԳ (ԺՈՐԺ) ՊԵՏՐՈՍ ԲԱԳԱՏՈՒՐԵԱՆԻ ցաւալի մահը, որ տեղի ունեցաւ Ապրիլի 3ին 2010 չետ երկարատեւ հիւանդութեան, Կլենտէյլի Adventist հիւանդանոցին մէջ:

Յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ Շաբաթ, Ապրիլ 10ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Hollywood Hills Forest Lawn Սպիտակ եկեղեցւոյ մէջ, Church of the Hills, ապա թաղման կարգը կը կատարուի նոյն գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝ Այրին Վերոնիք Բագատուրեան Զաւակները՝ Պիանքա եւ Սթիւ Բագատուրեաններ: Եղբայրները՝ Վանուշ, Միշիկ, Ռուբիկ, Հենրիկ, Անդիկ Բագատուրեաններ, իրենց ընտանիքներով եւ համայն հարազատները: Թաղման արարողութենէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Կլենտէյլի Hilton պանդոկին մէջ, 100 West Glenoaks Blvd. Glendale:

### ՇՆՈՐԱԿԱԼԻՔ

Մեր սիրելեացի ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ ԳՐԻԳՈՐ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ մահուան առթիւ՝ աչտու կու գանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, փոխան ծաղկեպսակի, նուիրատուութիւններով, հեռախօսով, գրութեամբ եւ ելոյթներով մասնակից եղան մեր մեծ վիշտին եւ ամոքեցին մեզ:

Կիւլէն Գուգուեան եւ ընտանիք \*\*\*\*\*

### ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ մահուան տխուր առիթով հանգուցեալի հարազատները \$250 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

### ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կատարուած են Նոր Սերունդ Մշակութային Միութեան, որուն համար միութիւնս շնորհակալութիւն կը յայտնէ բոլորին.

- Տէր եւ Տիկ. Մայքըլ Նահապետ \$500
- Տէր եւ Տիկ. Խաչիկ Քէշիշեան \$200
- Տիարք Ճորճ եւ Յովսէփ Գուգուեան \$200
- Տէր եւ Տիկ. Արա Բալուլեան \$150
- Տէր եւ Տիկ. Շաւարշ Բալուլեան \$100
- Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան \$100
- Տէր եւ Տիկ. Յարութ Տէր-Դաւիթեան \$100
- Տէր եւ Տիկ. Սամուէլ Տուրնազեան \$100
- Տէր եւ Տիկ. Գրիգոր Խոտանեան \$100
- Հայ Քոյրերու Վարժարանի Տրդ դասարանի աշակերտներ \$100
- Տէր եւ Տիկ. Սուհէլ Տանհաշ \$50
- Տէր եւ Տիկ. Գաբրիէլ Մոլոյեան \$50
- Տէր եւ Տիկ. Ժիրայր Կիրակոսեան \$50
- Տէր եւ Տիկ. Մարտիրոս Արոյեան \$50
- Տիար Սահակ Շամլեան \$50
- Օրդ. Արաքսի Գուլումճեան \$50
- Էլիսա Տատեան \$50

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104  
Norserount@sbcglobal.net

### ՇՆՈՐԱԿԱԼԻՔ

Մեր սիրելեացի ամուսնոյն եւ հարազատին Փրոֆ. Դոկտ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՒԲԵԱՆԻ մահուան առթիւ սոյն գրութեամբ կու գանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Արեւմտեան Թեմի առաջնորդներ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանին, Հայ Կաթողիկէ Ժողովրդապետ Հայր Անտոն Սարոյեանին, Հայ Աւետարանական Համայնքի առաջնորդ՝ Վեր. Ճօ Մաթոսեանին, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանին, առաջնորդական փոխանորդ՝ Հոգւ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Երարմեանին, Մաշտոց Գոլէճի տնօրէն՝ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանին, «Նոյեան Տապան» գործակալութեան, Սփիւռքի Նախարարութեան, հայ մամուլի եւ տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներուն, «Մասիս», «Ասպարէզ», «Նոր Օր», «Նոր Հայաստան», «Համայնապատկեր», «Armenian Observer», «Նոր Կեանք» եւ «Ժամանակ» թերթերուն, ինչպէս նաեւ բոլոր այն անձնաւորութիւններուն, որոնք անձամբ, ծաղկեպսակով, փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով, գրաւոր կամ հեռախօսով եւ կամ յարգանքի խօսքերով իրենց գնահատականն ու զօրակցութիւնը յայտնեցին, միաժամանակ ջանացին ամոքել մեր մեծ ցաւը:

Մշտնջենական հանգիստ իր հոգիին: Վշտահար այրին Անահիտ Սեղրակեան-Խրլոբեան եւ հարազատները

### ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

### ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680


### REQUEST FOR PROPOSALS RFP NO. 7530 INSURANCE BROKERAGE AND RISK MANAGEMENT CONSULTING SERVICES

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing insurance brokerage and risk management consulting services. A copy of the RFP may be obtained beginning March 22, 2010 via [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps) or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted until 2:00 P.M., by April 23, 2010.

4/1, 4/8/10  
CNS-1820924#  
MASSIS WEEKLY



# ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ 10 ՀԱՍԱՐԱԿ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ



ԸՆԴԱՄԵՆԸ 10 ՊԱՐՁ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ՝  
ՄԵՆՔ և ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԸ ՁԵՈՒՔ ԿԲԵՐԵՆՔ.

- ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ
- ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ
- ԱՎԵԼԻ ԼԱՎ ՓՈՒՍԴՐԱՄԻՋՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Մարտ ամսին մեզանից յուրաքանչյուրը թերթիկ կստանա: Այդ թերթիկը առնչվում է Միացյալ Նահանգների առաջիկա մարդահամարին: Մարդահամարին մասնակցելը չափազանց կարևոր է, քանի որ դրանից կախված կլինի մեր ապագան: Մարդահամարի թերթիկը Ձեր իրավական կարգավիճակի, կրոնի, ինչպես նաև անձնական կյանքին վերաբերող հարցեր չի պարունակում: 2010 թվականի մարդահամարին ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելե՛ք [2010census.gov](http://2010census.gov)

ՈՒՐԵՆՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԹԵՐԹԻԿԻ 10 ՀԱՄԱՐԱԿ  
ՀԱՐՑԵՐԻՆ, ՓՈՍՏՈՎ ՉԵՏ ՈՒՂԱՐԿԵՆՔ և ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ:

United States  
**Census  
2010**  
ԱՄՆ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐ-2010  
ԱՄՆ. ՄԵՐ ԶԵՈՒԹՈՒՄ Է